№ 2 (103) X ՏԱՐԻ ՄԱՐՏ 1900

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
"Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԱՄԲՈՒԽԱՅԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

„Եթէ կարելի լինէր ենթադրել, որ տաճկական վարչութիւնը այսպիսի ճգնաժամում (1876, սեպտեմբեր) կարող է Եւրոպայի համաձայնութեամբ կամ նրա վաւերացմամբ շարունակել իր օրինական գոյութիւնը Բուլգարիայում, այդ դէպքում պէտք է յանցանք համարել մարդկային արդարադատութեան ամէն մի բողոք իշխանութիւնը իշաը գործ դնելու դէմ, ամէն մի ընդդիմադրութիւն ամէնազազրելի բռնապետութեան դէմ։ — Բայց մենք դեռ չենք հասել այդ տեսակ ծայրայեղ ստորացմանն"...

Վ. ԳԼԱԴՍՏՈՆ

IV

Դիմենք այժմ այն գործնական ընթացքին, որ արտայայտուել է հայ յեղափոխական շարժման մէջ։

Կանգ առնելով ամէնախոշոր գծերի վրայ, մենք պիտի յիշենք այստեղ Պօլսում կատարուած ցոյցերը, Սասունի, Վանի և Զէյթունի շարժումները, ռուս և պարսկական սահմաններից արած արշաւանքները (Կուկունեան և Խանասօր), մի ահագին շարք համարեա ամէնայն տարի կրկնուող կռիւներ, որոնք կապուած են եղել ղէնքի փոխադրութեան, հրոսակային խմբերի գործունէութեան կամ կազմակերպական այլևայլ գործերի հետ, և վերջապէս բազմաթիւ տէռորիստական գործողութիւններ, ուղղուած պաշտօնական անձերի և մանաւանդ հայ լրտեսների և դաւաճանների դէմ։ Ընդհանրացնելով այս յեղափոխական երևոյթները, մենք կը տեսնենք, որ հայ յեղափոխական կուսակցութիւնները ցոյցեր և արշաւանքներ են արել, ժողովրդական շարժումներ են առաջ բերել, զէնքի փոխադրութեամբ են զբաղուել, աշխատել են կազմակերպել ժողովուրդը կռուի համար, տէռորներ են կատարել։

Ո՞րն է սրանցից աւելորդը, ինքնակարը, կրստաբերը։

Նախորդ յօդուածում բազմաթիւ օտար հեղինակների հետ միասին մենք տեսանք, որ հայկական շարժումը մի բնական, մի շատ հասկանալի և միաժամանակ միանգամայն նպատակայարմար երևոյթ է մեր կեանքում։ Եթէ մենք չենք սխալուել այդ եզրակացութեան մէջ, ուրեմն, որոշելով հայկական շարժման էութիւնը և նպատակը, մենք կունենանք պատրաստ չափ դրած հարցին պատասխանելու համար. անմիտ, պարսաւելի, անպայման բացասական պիտի համարուեն այն ձեռնարկները, որոնք չեն համապատասխանում այդ որոշումից բղխող պահանջներին, և ընդհակառակը՝ օգտակար, ցանկալի, դրական նրանք, որոնք համապատասխանում են այդ պահանջներին։

Ինչ էր ուրեմն մեր շարժման նպատակը։ — Ուրիշ ոչինչ, եթէ ոչ կազմակերպուած, բռնի ուժով կռուել, բողոքել Տաճկաստանում տիրող սպանիչ կարգերի դէմ մինչև վեց պետութիւնների երաշխաւորած միջամտութեամբ կը փոխուեն այդ կարգերը դէպի լաւը։

Ինչպէս տեսնում է ընթերցողը, կազմակերպութիւն, բռնի ուժ, բողոք և վերջապէս եւրոպական միջամտութեան հասնելու հաշիւները — այս որոշման անհրաժեշտ տարրերն են կազմում։ Կանգ առնելով այս տեսակէտի վրայ, մենք կարող ենք վերը դրած հարցը՝ թէ „ո՞րն է մեր յեղափոխական անցեալում տեղի ունեցած ձեռնարկներից աւելորդը, ինքնակարը, կրստաբերը" — վերածել այս ձևի. ո՞րն է դրանից զուրկ այս տարրերից, ո՞րն է դուրս մնում իբր չափս ընդունած մեր որոշումից։

Ցաւական է մի ամէնաթեթև հայեացք ձգել յիշեալ գործառնութիւնների վրայ, որպէսզի տեսնենք, որ նրանցից իւրաքանչիւրը ունի մեր որոշման բոլոր տարրերը։

Ցոյցեր, արշաւանքներ և հրոսակային խմբերը կազմակերպում են կռուող ուժերը, ժողովրդականացնում են բողոքի ճանապարհը, կրթում են ժամանակակից սերունդը, վառ են պահում ժողովրդի դիմադրական տրամադրութիւնը, հարուածում են թշնամու հեղինակութեանը թէ ներսը՝ սեփական հպատակների աչքում, և թէ դուրսը՝ օտարների առաջ, ինքնում են կառավարչական շահերին, զբաղեցնում են եւրոպական հասարակական կարծիքը և կաբինէտները, այսինքն առաջ են մղում միջամտութեան գործը, առնւազը թոյլ չեն տալիս հարցը մոռացութեան մատնուի թէ իբր միջազգային քաղաքական խնդիր և թէ իբր աշխարհիս բոլոր ծայրերում ցրուած հայերիս համար ընդհանուր ազգային դատ։

Ժողովրդական շարժումները, իբր յեղափոխական ամէնալայն ձեռնարկներ, իրենց ազդեցութեամբ, իհարկէ, աւելի նշանաւոր են։ Ամէն տեղ և ամէն

ժամանակ ապստամբութեան գաղափարը կապուած է եղել այդ տեսակ շարժումների հետ և այնքան վճռական դեր են ունեցել դրանք ժողովուրդների պատմական կեանքում, որ ազատութեան անունով սկսուած կռիւների գործնական նպատակն են կազմել միշտ։ Պարզ է ուրեմն, որ հայկական շարժումը ևս չէր կարող խուսափել կռուի այդ ամենաէական տարրից։

Զէնքերի փոխադրութեան, կազմակերպական հազարումի հոգսերի և կատարուած տեռորների մասին խօսելն արդէն աւելորդ է, որովհետև դրանք անհրաժեշտ միջոցներ են վերոյիշեալ գործառնութիւնների համար և յեղափոխական ամէնամի ծրագրում անշուշտ տեղ պէտք է բռնեն։

Ահա՝ մի քանի խօսքով մեր քննադատութեան ենթակայ ձեռնարկների դրական կողմերը։ Ընթերցողին ենք թողնում լրացնել այս ընդհանուր գծերը կենդանի օրինակներով, որոնք կը պարզեն նրա առաջ, թէ որքան յեղափոխական յայտնի ձեռնարկները իր ժամանակին մեծ ազդեցութիւն են ունեցել, մի կողմից՝ հայ հասարակութեան, հայ ժողովրդի տրամադրութեան վրայ, ներշնչելով նրան ոգևորութիւն և հետաքրքրութիւն դէպի մեր դատը, կռիւը, յեղափոխական կուսակցութիւնները և այլն, ու միւս կողմից՝ եւրոպական դիւանագիտութեան վրայ, ստիպելով նրան որոշ դէպքերում սեղանի վրայ դնել մոռացութեան մատնուած հայկական խնդիրը և միւս դէպքերում՝ յատուկ կոնֆերանսներ կազմել հայկական հարցով զբաղուելու համար։

Բայց գուցէ կան յեղափոխական կռուի ուրիշ միջոցներ, որոնք աւելի արդիւնաւէտ կարող էին լինել, քան յիշեալները։ Թող ցոյց տան, ովքեր գիտեն այդպիսիք։ Իսկ մենք կարծում ենք, որ մեր յեղափոխական շարժումը, իմիջի այլոց, հէնց նրանով էլ արտայայտեց իր կենսունակութիւնը, իր ճկունութիւնը և ամենախիստ պայմաններին յարմարուելու իր ընդունակութիւնները, որ նա կարճ ժամանակամիջոցում ըմբռնեց կռուի ամենաբազմազան միջոցները՝ սկսած համեմատաբար խաղաղ բնաւորութիւն ունեցող բողոքներից մինչ ուժանակի գործածութիւնը, սկսած անհատական տեռորներից մինչ ժողովրդական շարժումները։

Գուցէ, վերջապէս, այս բոլոր միջոցներին դիմելու կարիք չկա՞ր. գուցէ, պէտք էր հետևել ոևէ աւելի սահմանափակ ուղղութեան, որպէսզի, չցրուելով յեղափոխական ուժեր և միջոցները շատ տեսակ գործերի վրայ, մենք կետրօնացնէինք մեր ուժերը որոշ խնդիրների շրջանում։ Տեսնենք։

Համաձայն այն նպատակին, որ մենք յատկացրինք հայկական շարժման, յեղափոխական գործունէութեան եղանակը ինկատի պէտք է ունենար, ի միջի այլոց, եւրոպական միջամտութիւն առաջ բերելու բոլոր հնարաւորութիւնները։ Ահա այն պայմանները, որոնք անհրաժեշտ էին դրա համար։ Հարկաւոր էր, որ մեր բողոքները տեղի ունենային մեծ պետութիւնների աչքի առաջ. որ այդ բողոքները իրենց խիստ բնաւորութեամբ, ընդունակ լինէին արտայայտելու կացութեան ամբողջ ծանրութիւնը. որ դրանք կրէին սիստէմատիք և ոչ թէ պատահական երևոյթների բնաւորութիւն. որ հայութիւնը երևար իբր մի ուժ, որին արհամարհել չէ կարելի, որի գոյութիւնը կարող է նպաստաւոր լինել եթէ ոչ մարդկային քաղաքակրթութեան, գոնէ այս կամ այն պետութեան համար և որի անխաղաղ, յեղափոխական ոգով բորբոքուած տրամադրութիւնը ընդհակառակը՝ միանգամայն վնասակար է իրենց շահերին։ Աւելացրէք այս բոլորին և այն պահանջները, որոնց պէտք է բաւարարութիւն տայ ամէնամի կազմակերպութիւն, որ ձգտում է որոշ դեր կատարել ընթացիկ կեանքում — այն է՝ մխել իր ուժեր և միջոցները ամենատնտես կերպով, գրաւել բոլոր նպաստաւոր տարրեր և հոսանքները ու կանոնաւորել նրանց ընթացքը, — և դուք կը հասկանաք, որ մեր յեղափոխական անցեալում գործադրուած կռուի միջոցների ոչ մի մասը ոչ պէտք էր և ոչ էլ կարելի էր զոհել յօգուտ միւսների։

Ցոյցեր և արշաւանքներ անելով, յեղափոխականները գործում էին Պոլսում և Տաճկաստանի սահմանների վրայ։ Պոլսի նշանակութիւնը կռուի գործում յայտնի է, և մենք չենք երկարիլ այստեղ այդ մասին. Պոլսում յեղափոխականները ոչ միայն Տաճկաստանի սրտումն էին, այլև համաշխարհային նշանակութիւն ունեցող մի կէտում, ամբողջ Եւրոպայի աչքի առաջ, նրա շահերի անմիջական թատերաբեմում. մի ատրճանակի պայթում այնտեղ աւելի է լսելի աշխարհին, քան տասնեակ հրացանների որոտումը երկրի խորքերում։ Սահմաններում գործելով, մենք նոյնպէս անլուր անկիւններում չէինք, այլ այնպիսի վայրերում, ուր բնականաբար պէտք է շահագրգռէինք առնւազը երկու պետութիւն։ Ցուցական այդ երկու տեսակի ձեռնարկները բաւարարութիւն են տալիս նաև տնտեսաբար ու սիստէմատիք, տևողական կերպով, կռիւը տանելու պայմաններին, որովհետև դրանք պահանջում են համեմատաբար աւելի քիչ ուժ և միջոցներ, իսկ նախապատրաստութեան համար աւելի քիչ ժամանակ — մի հանգամանք, որ ոչ միայն կարևոր է առհասարակ գաղտնի ձեռնարկների յաջող իրագործման համար, այլև էական նշանակութիւն ունէր այնպիսի օրերում, երբ հաւատացած Եւրոպայի օգնութեան, յեղափոխական կուսակցութիւնները պարտաւոր էին ձգտել ըստ կարելոյն շուտ բարեփոխել տալու ժողովրդի ծանր դրութիւնը։ Հասկանալի է նաև, որ այդ ձեռնարկները չէին հակասում երկրի գործունէութեան պահանջին. ընդհակառակը՝ նպատակ ունենալով թեթևացնել երկրում տիրող ծանր պայմանները, դրանով միայն պէտք է դիւրացնէին և բնականաբար առանձին զարկ ային երկրի գործունէութեանը։

Կան սակայն մարդիկ, որոնք ընդունելով ցուցական գործունէութեան կարեւորութիւնը մեր շարժման սկզբնական շրջաններում, հերքում են յետագայ ցոյցերի նշանակութիւնը: „Քանի որ մեր հարցը հերթական էր, հարկաւոր չէր այս կամ այն ինչ ժամանակ նորից գրգռել թշնամուն" — ասում են դրանք համոզուած շեշտով, կարծես թէ երբ մի հարց հերթական է, այդ արդէն նշանակում է, որ այդպէս էլ կը մնայ նա կամ անպատճառ յաջող լուծում կըստանայ: Հարցրե՞լ են արդեօք երբեւիցէ իրենք իրենց այդ մարդիկ, թէ ժամանակի ընթացքում, շնորհիւ քաղաքական ուժերի և շահերի այս կամ այն դասաւորման, քանի-քանի հերթական հարցեր հեշտութեամբ ծալուել մի կողմ են դրուել կամ նոյնիսկ հանգչել են յաւիտեան: Իսկ վերջին 20 տարուայ աննշան ժամանակամիջոցում միթէ՞ քիչ առիթներ ունեցանք մեր սեփական աչքերով տեսնելու, թէ որպիսի անգութ խաղերի մատնեց մեր դատը: Տեղին է յիշատակել այստեղ հետեւեալ բնորոշ փաստը: Տաճիկ կառավարութեան երեք պատւիրակները մէկը միւսի յետեւից Ժընէվ եկան հէնց այդ „աւելորդ", „անմիտ" ձեռնարկներից յետոյ՝ 96, 97 թուականներին, և որ գլխաւորն է՝ իրենց առաջարկութիւններում նրանք միակ պահանջ էին դնում դադարեցնել յեղափոխական գործունէութիւնը Պոլսում, իսկ բուն երկրի մասին՝ ոչ մի պայման, ոչ մի խօսք: Եւ յետոյ: Կան րոպէներ ժողովուրդների կեանքում, երբ կարելի է հաշտուել ամէն բանի հետ, բայց ոչ լռութեան: Կան րոպէներ, երբ լռութիւնը բարոյապէս բնորոշում է մի ամբողջ շարժում, մի ամբողջ ժողովուրդ, և այդպիսի րոպէներիցն էին այն ժամանակները, որոնց հետ կապուած են այսօր դատափետուող ցոյցերը: Երբ 95 և 96 թուականներին արեան մի ամբողջ ծով էր պատել Հայաստանին և երբ հայութիւնը, եթէ նա ստրկածին արարածների մի զանգուած չէր, պիտի անշուշտ բռնկուած լինէր վրէժի միակ հասկանալի զգացմունքով, պիտի դառնար վրէժի մի անվերջ աղաղակ, — այդպիսի րոպէում, ասում ենք, լռութիւնը պէտք է նշանակէր միմիայն և միմիայն ամբողջ ազգի կատարեալ բարոյական անկումը և յեղափոխական գաղափարի, յեղափոխական շարժման կատարեալ սնանկութիւնը: Փառք ուրեմն այն հերոսներին, որոնք ոչ միայն այդ գարշելի լռութիւնը խանգարեցին ու հայ ժողովրդի ամէնաարդար, ամէնաէական զգացմունքների արտայայտիչը եղան, այլև միանգամայն ապացուցեցին, որ նոյնիսկ ծանր օրերում նրանք ընդունակ են հաշուել իրենց քայլերը և թըշնամուն հարուածելու համար այնպիսի ձեռնարկներ ծրագրել և իրագործել, որոնք օտար լրագրերում տեղ-տեղ նոյնիսկ „հանճարեղ" անուան արժանացան:

Սակայն բաւականանալ միայն ցուցական ձեռնարկներով, այսինքն միայն երկրից դուրս կատարուող արշաւանքներով և ցոյցերով — նախ՝ ա ն կ ա ր ե լ ի է ր: Իրերի դրութիւնը ծանր էր հէնց ե ր կ ր ո ւ մ, ճնշում, հալածանքները զգալի էին հէնց այնտեղ, ուր ապրում է ժողովուրդը: Եւ բնականաբար ե ր կ ր ո ւ մ արդէն դիտւում էին յեղափոխական հոսանքներ, արդէն հանդէս էին եկել հոգւով բարձր և ազատութեան կրակով բռընկուած ուժեր, որոնք պէտք է անէին և անում էին իրենց գործը — ձգտում էին կազմակերպուել և կռուել (Ցունոներ, Զաթօ-Շէրօներ, Արաբօներ): Յեղափոխականների կապը դրանց հետ հետեւաբար նոր երեւոյթներ չէր ստեղծում, այլ նպատակ ունէր միայն ամբողջացնել ցրուած ուժերը, կանոնաւորել նրանց ընթացքը և այս կամ այն ձեւի իր օգնութեամբ դիւրացնել նրանց գործը — մի դեր, որ յեղափոխականների անհրաժեշտ պարտաւորութիւնների մէջ էր մտնում:

Այդ բաւական չէ: Ցուցական գործունէութեամբ ոչ միայն չէր կարելի բաւականանալ, այլև պ է տ ք է լ չ է ր: Ոչ մի հասարակական շարժում չէ կարող յարատեւել և մանաւանդ յաղթական վախճան ունենալ, եթէ նա ժողովրդականացած չէ ազգի մէջ, նրա զանազան մասերում, նրա մասսայում: Այնպիսի մի մեծ խնդիր, ինչպէս է մի հալածուող ժողովրդի ազատութիւնը ուժեղ բռնակալի ճիրաններից, չէ կարող յաջողութեամբ պսակուել, եթէ նա սահմանափակւի ժողովրդից կտրուած ոեւէ հասարակական դասակարգով: Այդ մէկ: Երկրորդ՝ ոչ մի ազատութիւն գին չէ կարող ունենալ ժողովրդի համար և հետեւաբար պահպանուել, եթէ ինքը ժողովուրդը չէ գիտակցում ազատութեան պահանջը և չէ մասնակցում յանուն ազատութեան յայտարարուած կռուին. օդից ընկած ազատութիւնից՝ անգիտակից ժողովուրդը չի օգտւում և հեշտութեամբ կորցնում է նրան առաջին պատահական դէպքում: Երրորդ՝ ոչ մի ժողովուրդ չէ կարող իր անվերջ հեծեծանքներով իրական օգնութիւն սպասել արտաքին աշխարհից. քաջարի կռւի որոտալից ձայները, նուիրական գաղափարով սրբագործուած ռազմի աղաղակներն են, որ արտայայտում են նրա կենսունակութիւնը, նրա հոգեկան արժանիքները. դրանք են, որ ներշնչում են յարգանք դէպի մի ազգ և երաշխաւորում նրա համար թէ համակրութիւն և թէ ինքնուրոյն ապրելու բարոյական իրաւունք: Չորրորդ՝ լոկ ցուցական գործունէութիւնը կարող էր ընդունիլ արտաքին աշխարհի կողմից իբր միայն մի խմբի, երիտասարդութեան մի որոշ մասի գործ, որ կապ չունէր ժողովրդի հետ, և այդպիսով չքացնել հայկական բողոքի ամբողջ նշանակութիւնը: Թիւրք կառավարութեան կամ եւրոպական շահերին վնասելը միտք է ստանում այն ժամանակ միայն, երբ նայում են յեղափոխականների վրայ իբր ժողովրդի տրամադրութեան արտայայտիչների վրայ. հակառակ դէպքում՝ վնասուողները, „հայկական հարց" կոչուած բանը մի կողմ թողնելով, կարող են իրենց համար նպատակ դնել համերաշխ, միացած ուժերով վերջ դնել իրենց հանգստութիւնը և շահերը

ձեռնահարող մի „վնասակար տարրի“։ Այն ինչ՝ երբ Պոլսում գործող յեղափոխականի հետ երկրում նկատուում է և ժողովրդի յուզած տրամադրութիւնը, այն ժամանակ՝ առաջին երևոյթը ընդունուում է միմիայն իբր երկրորդի արձագանք, և բնականաբար „վնասակար տարրի“ գաղափարը տեղ է տալիս „հայկական դատի“ խնդրին — մի հանգամանք, ուր արդէն սուլթանը և Եւրօպան, յայտնի պատճառներով, չէին կարող համերաշխ լինել, չէին կարող միանալ։

Բայց զգում ենք, որ այս հողի վրայ կանգնելով, մենք բաւականութիւն չենք կարող տալ մեր հակառակորդներին։ Զգում ենք, որ այս բոլորի դէմ նրանք կարող են ասել. „Մենք սկզբունքով հակառակ չենք այդ բոլորին։ Ընդհանուր առմամբ, դոքա անհրաժեշտ են, անխուսափելի են, գուցէ նոյնիսկ նպատակայարմար են, բայց... բայց ամէն բան իր տեղն ունի, ամէն բան էլ իր չափն պէտք է ունենայ։ Պէտք է մոռանալ, որ այսօր, փոխանակ առաջ գնալու, մեր յետևից մենք տեսնում ենք հարիւր հազար զոհեր և ընդհանուր յուսահատութիւն... Ահա ինչու մենք կարծում ենք, որ հայ յեղափոխական անցեալում շատ բան չէր համապատասխանում ժամանակի քաղաքական հանգամանքներին, որ յեղափոխական կուսակցութիւնները յանպատրաստից հանդէս եկան, որ նախ քան գործնական քայլերի դիմելը, հարկաւոր էր ժողովուրդը կազմակերպել և ընդհանրապէս երիտասարդական յախուռն զգացմունքների փոխարէն գործի մէջ պէտք էր ղեկավարել սառն դատողութեամբ“։

Ամենադառն կսկիծով և վրէժխնդրութեան կրքով լցուած՝ մենք խոնարհւում ենք այն անհամար կորուստների առաջ, որոնց ենթարկուեց մեր տարաբախտ հայրենիքը և որոնք այս առարկութիւնների ծուծն են կազմում։ Սակայն թոյլ կտանք մեզ նկատելու, որ մեր դժգոյն հակայեղափոխականները կամ եսամոլ իմաստակները չեն, որ պէտք է այսօր ժողովրդասիրութեան և հայրենասիրութեան դասեր կարդան յեղափոխականներին — հայութեան այն ամենազգայուն տարրին, որ իր անձը դրեց նրա դատի յաջողութեան համար։ Հակառակորդների այս „խրատները“ յիշեցնում են մեզ Շէքսպիրի այն հեգնութիւնը, որ արտասանում է հմայիչ Համլէթը իր անհաւատարիմ մօր հասցէին.

> Պէտք է նոյն ինքը առաքինութիւնը
> Ներողութիւն խնդրէ մոլութիւնից,
> Այո, եւ խոնարհւի, պաղատանք անէ
> Եւ հրաման աղերսէ ըարիք գործելու...

Հեշտ է, շատ հեշտ է, այո, պատմական բարդ, պատասխանատու, յաճախ աննախատեսելի դէպքերը տեղի ունենալուց յետոյ, „քննադատի“ դերի մէջ մտնել և սրտացաւի ծիրանի հագած՝ անվերջ կրկնել՝ թէ „այս այսպէս չպիտի լինէր“ կամ „այն՝ այնպէս“։ Ամենասահմանափակ մարդը անգամ այդ դէպքում կարող է այնքան երևակայութիւն ունենալ, որ կատարուած իրողութիւնը զարդարի ոևէ փոփոխութիւնով կամ մի նոր գծով, և զինուած այդ տեսակէտով, դառնայ դատափետէ եղածը։ Հազարաւոր մարդիկ, որոնք մասնակցել են ֆրանսիական յեղափոխութեան կամ գրել են նրա մասին, ժամանակին պնդում էին, որ եթէ այս կամ այն բանը այնպէս չլինէր, ինչպէս եղաւ, աւելի լաւ կը լինէր, յեղափոխութիւնը աւելի խաղաղ ելք կըստանար, և այլն, և այլն։ Եւ եթէ մարդիկ վերջ չեն մնացել այդ տեսակ տարտամ խորհրդածութիւններից մի այնպիսի յեղափոխութեան վերաբերմամբ, որի ծառայութիւնը տարածուեց ամբողջ աշխարհի վրայ, — զարմանալու ոչինչ չկայ, իհարկէ, որ հայկական արիւնալից շարժման մասին խօսողները, այն էլ հայ խօսողները, աւելի լայն ասպարէզ կարող են ունենալ պատմական հաղարաւոր կարկատաններ առաջարկելու համար...

Սակայն մեր հակառակորդների ձեռքից այդ վերջին զէնքն էլ խլելու յոյսով, մենք կանգ կ՝առնենք բերած առարկութիւնների վրայ ևս, չնայելով դոցա անսահման անորոշութեանը։

(Շարունակելի)

„ԱՂԲԻՒՐ ՋԱՆ“

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՐԴ ՍԵՐՈԲԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ)

1. Բոլոր աշխարհում
Լսւեց քու համբաւ,
Առիւծ քաջարի,
Աղբիւր ջա՛ն,
Հայոց աշխարհի։

2. Հայութեան անուն
Խիստ բարձրացուցիր.
Քնացած սրտեր,
Աղբիւր ջա՛ն,
Դուն բորբոքեցիր։

3. Մեզի օրինակ
Թողուցիր, գացիր.
Երիտասարդաց,
Աղբիւր ջա՛ն,
Դուռներ բաց արիր։

4. Քաղցր հայրենիքդ
Ինաւ չթողիր,
Մինչև վերջին շունչ,
Աղբիւր ջա՛ն,
Պատերազմեցիր։

5. Սուրբ գործ սիրեցիր,
Խումբեր կազմեցիր.
Անգութ թիւրք և քիւրտ,
Աղբիւր ջա՛ն,
Սարսափեցուցիր։

6. Բաղէշ վիլայէթ
Ոտքի կանգնեցրիր,
Խեղճ ժողովուրդին,
Աղբիւր ջա՛ն,
Հոգի, յոյս տուիր։

7. Գիշեր և ցորեկ
Ախլաթ լալիս է,
Անդադար կկոչէ,
Աղբիւր ջա՛ն,
„Սերոբ“ և „Սօսէ“։

8. Այժմ ննջում ես
Սև հողի տակին,
Մեզի թողնելով,
Աղբիւր ջա՛ն,
Օգնել հայ ազգին։

Սիրով Աղբիւրի
Գործին հետևինք.
Վրէժ կը գոչէ
Աղբիւր ջան.
Հայե՛ր, վրէժ առնե՛նք...

ԻՆՏՐԻԳՆԵՐ ԿԻԼԻԿԻՈՅ ՇՈՒՐՋԸ

(ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑ)

—

Կ. Պոլիս, մարտ 20

Ամէնքս մեզի կը մխիթարէինք, որ Կիլիկիոյ ընտրութեան թոքախտ խնդիրը վերջապէս վախճան մը պիտի ունենայ. Պահա պէյ՝ կառավարութեան կողմէ, Խապայեան՝ պատրիարքի կողմէ—հոն են. հոն է և իրատէին հրամանը — „կատարել ընտրութիւնները ըստ առաջնոյն" (ab antiquo)։ Ասչափ տարբեր հոն ըլլալէ ետքը, կը խորհէինք մենք, ամէն ինչ վճռուած է. և՛ ոչխարներն ողջ-առողջ, և՛ գայլերը կուշտ փորով։ Բայց... Նորէն պայթեցաւ։ Գայլ Համիդ մէկ կերակուր մը միայն ունի — հայի միս, հայի արիւն. առանց ատոր երբեք չի կշտանար։

Հոս իրատէ ըրած է, հոն Պահա պէյն ու Ատանայի վալի բազմահոչակ Պահրի փաշան իր հրամաններով զինած։ Պահրի ու Պահա հայակեր գազաններ են և հրամանալ ստացեր են. անոնց ուզածն ալ ադ է։ Ատանայ լեփ լեցուն է զօրքերով։ Տարսօնի և Վահկայի զօրանոցներէն 3000 նոր զօրք է բերուած քաղաք և տեսակ մը պաշարման վիճակ է հաստատուած։ Գաղտնի ու յայտնի լրտեսները ամէն անկիւն կը վխտան. անոնցմէ անցնելու տեղ չէ մնացեր։ Ոստիկանութիւնը սաստիկ շատցեր է։ Հսկողութեան խստութենէն գետին թքնել ալ կարելի չէ։

Հազիւ Խապայեան Ատանա կը հասնի, լրտեսները իսկոյն զինքը կը շրջապատեն։ Պահրի ու Պահա կը յայտնեն իրեն, որ ընտրողական ժողովներուն նախագահելու իրաւունք չ'ունի։ Ամէն ինչ երկուքը կ'առնեն ափերուն մէջ, իսկ Խապայեան բացը կը մնայ իբր աւելորդ իր մը... Պալատի հրամանն ադ է։

Խապայեան անմիջապէս կը հեռագրէ պատրիարքարան։ Խել մը հեռագիրներ կը փոխանակուին։ Օրմանեան կը դիմէ կառավարութեան, բայց զինքը մարդու տեղ դնող չ'ըլլար։ Վերջապէս ճարը կտրած՝ մարտ 4/16-ին, շաբաթ օր, Օրմանեան կը խրկէ իր հրաժարականը։

Հրաժարական № 2... և հոպիտական ծաղրածութիւն նոյնպէս № 2։

5 օր էր արդէն Օրմանեան պաշտօնատեղի չէր իջնար, սարջի պէս չիլէն էր մտած"։ Մարտ 9/21-ին, հինգշաբթի, պալատէն կանչեցաւ և սուլթանին ներկայացաւ։ Սուլթան զայն կը համոզէ որ իր թուղթը յետ առնէ, որովհետև ինքն արդէն նոր իրատէ ըրած է ընտրութիւնները պատրիարքի ուզածին պէս ընել։ Ու, եթէ հաւատալու ըլլանք Օրմանեանի խօսքին, իբր թէ ինք ըսած է, որ „ձեր իրատէները չեն գործադրուիր, պաշտօնեաները կարևորութիւն չեն տար"։ Իբր թէ բողոքած է Դատական Նախարարին, զինուորական տուրքերու (աս մասին եւրոպական թերթերն ալ գրեցին), Ատանայի վալիի և Պահա պէյի դէմ։ Եւ նորէն, ըստ իր խօսքերուն, աւելցուցած է որ ինք պաշտօնատեղի չպիտի իջնայ, մինչև որ սուլթանի տուած իրատէն էապէս չգործադրուի։

Պատրիարքարանը իսկոյն հեռագրեց Կիլիկիոյ ամէն թեմերուն, որ պատասխանեն միմիայն Խապայեանի ընտրութեան հրաւէրին և ոչ Պահայի կամ Պահրիի։ Մապէինէն ալ լուր էր եկեր, որ մարտ 15/27-ին նշանակուած ընտրութիւնը յետաձգուած է արդէն ցնոր կարգադրութիւն։

Եկաւ հասաւ մարտ 15/27-ը։ Կառավարութիւնը իմացուց Օրմանեանի որ ընտրութիւնները յետաձգած է մինչև ապրիլ 5-ին (ն. տ.), և չարաբաստիկ շշուկներ, բայց խիստ հաւանական, սկսած են շրջիլ, որ Օրմանեան իր հրաժարականը ետ է առած... Ծաղրածո՜...

Քիչ մը պարզենք, թէ ի՞նչ է եղած հին ընտրութեան ձևը, ի՞նչ է կառավարութեան ցանկութիւնը և թէ ի՞նչ է պատրիարքի ու պատրիարքարանի ուզածը։

Մինչև 1871 թիւը Կիլիկիոյ կաթողիկոսները կ'ընտրուէին միայն Սսոյ միաբաններու կողմէն, և կաթողիկոսութիւնը տեսակ մը մենավաճառ դարձած էր մէկ ընտանիքի մը մէջ, ժառանգաբար։ Բայց 1871-ին Պոլսոյ ազգային նորակազմ վարչութիւնները միջամտեցին և ընտրութեան ձև մը մշակեցին, թէև Սահմանադրութեան մէջ ադ տեսակ որոշ յօդուած մը չկայ։ Կիլիկիոյ վերջին կաթողիկոսը ադ ձևով ընտրուեցաւ։ Իսկ ադ եղանակը կ'ազատէ Կիլիկիոյ աթոռը տգէտ ու ընտանեկան կաթողիկոսներէ է։ Միայն հոս ալ Կիլիկիոյ աթոռը տեսակ մը ստորադրեալ կ'ըլլայ Պոլսոյ պատրիարքութեան։

Երբ կառավարութիւնը „ըստ առաջնոյն" կ'ըսէ, կը հասկնայ 1871-էն առաջ եղած ընտրողական ձևը, իսկ պատրիարքարանը „ըստ առաջնոյն" ըսելով կ'ընդունէ 1871-էն ասդին գործադրուած եղանակը։

Իհարկէ Համիդի համար Սսոյ վանահայր-կաթողիկոսի մը ընտրութիւնը փարայի մը անգամ նշանակութիւն չէր ունենայ, եթէ ադ կարմիր գազանը իր ոճրագործ գանգին մէջ տարբեր մտքեր չտածէր։

Համիդի ձգտումն է, որչափ հնար է, բաժնել, չէզոքացնել Թիւրքիոյ հայութիւնը, աւելի ազատ ու անպատասխանատու կերպով զայն ճզմելու համար։ Այժմ առիթէն օգտուելով, կ'ուզէ Կիլիկիոյ ընտրութիւնները իր վստահելիներու ձեռքով կատարել տալ և իր լրտեսներէն մին,—Բարդուղիմէոս կամ Մեսրոպ եպիսկոպոս կամ Վահան վարդապետ մը—հոն կաթողիկոս դնել և ետքէն զայն հրատարակել իբր Էջմիածնէ իսպառ անկախ պետ մը Թիւրքիոյ հայերու եկեղեցիին։ Եւ ասով իբր թէ Թրքահայերու և ռուսահայերուն բարոյական կապը կտրած, իրարմէ իսպառ բաժնած կըլլայ։

Նման չէ՞, ընթերցող, գործելու աս եղանակը խել մը յեղափոխականներու (!?) ռուսահայերու և Թրքահայերու առթիւ ծագեցուցած խնդրին։ Աս չափ ալ նմանութի՜ւն...

Համիդի այս ցանկութեան դէմ ի՞նչ է պատրիարքնուս ուզածը։

Ի՞նչ պիտի ըլլայ. չի ուզեր ազգին իրաւունքները ոտնատակ երթալը։ Պարզ, բայց միամի՜տ մեկնութիւն։

Օրմանեան նախ ուզեց իր անձին մէջ միացնել պատրիարքի և կաթողիկոսի տիտղոսները և ետքէն անկախութիւն հրատարակել. բայց երբ տեսաւ, որ կառավարութեան աչքէն ինկած է և անոր ձեռքով չպիտի կրնայ ընտրուիլ, խեղդուողի մը պէս ձեռքը նետեց փըրփուրներուն։ Վերսկսեց իբր թէ ազգին շահերը պաշտպանելու խաբեբայ ծաղրածութիւնը, որ նորէն ժողովուրդին սիրտն առնէ, նորէն ընտրուիլ կարող ըլլայ։ Տեսաւ № 1 հրաժարականը, իրատէ մը կորզեց սուլ-

թանէն... Փառամոլներու ուղեղն ալ կարծես կը պըզտիկնայ։ Հուտով մը կարծեց որ ժողովուրդը արդէն իրեն հետ հաշտուած է, զինքը Իզմիրլեանէ ալ բարձր կը դասէ։ Իսկոյն Խապայեան խրկեց ընտրութիւններուն, յուսալով որ ինքն է միակ արժանաւոր ընտրելին։ Եւ երբ տեսաւ որ Պահրի և Պահա մէկ կողմ նետեցին Խապայեան—ըսել է որ իր թեկնածութեան վերջին հնարաւորութիւն ալ փշրուեցաւ — ա՛ն ատեն Օրմանեան հրաժարեցաւ № 2 հրաժարականաւ...

Ստո՞ր դերասան... Հիմակ կը հրաժարի՞ս, երբ խնդիրը նորէն քո զազիր ես-իդ դպաւ, երբ զգացիր որ Պահայի ու Պահրիի միակ թեկնածուն Բարդուղիմէոսն է կամ Մեսրոպը և ոչ դու։

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ „ՄԻՈՒԹԻՒՆԸ“

(ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ)

—

Ցիւրիխ, 28 փետրուար

Մեր առաջն է «Եւրոպայի հայ ուսանողական Միութեան տեղեկագիրը»։ Բանաստեղծի խօսքերը նրա ընաբանն են՝ «Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն, քան զանձկալի եղբայր անուն»։ Բանաստեղծական է եւ նրա Յառաջաբանը. գեղեցիկ են նրա ոճերը—«Եղբայրութիւն», «եղբայր ենք մենք», «բարեկամական ձեռք մեկնել իրար», «ընդհանուր իդէալներ», «լուսաւորութեան զամպար» եւն...

Որքան եւ գեղեցիկ բան է բանաստեղծութիւնը, բայց մենք ստիպուած ենք մի կողմ թողնել նրան եւ իրերի վրայ նայել առօրեայ պրօզաիկ տեսակէտից։ Տեղեկագրի Յառաջաբանը բնորոշում է «Միութեան» նպատակները։ Ահա այդ Յառաջաբանի մասին էլ մտադիր ենք խօսել, մի կողմ թողնելով Տեղեկագրի միւս մասերը։

Յառաջաբանին նայելով, ուսանողները «կոչուած են ապագայում մեր նորափթիթ հասարակական (եւ) գրական ասպարիզում գործչի եւ առաջնորդողի դեր կատարելու, լուսաւորութեան զամպար հանդիսանալով»։

Սակայն «հասարակական գործչի» եւ նամանաւանդ «առաջնորդողի» դերը հեշտ դեր չէ եւ պահանջում է բազմակողմանի պատրաստականութիւն։ Հասարակական գործիչ եւ առաջնորդող հանդիսանալու համար բաւական չէ զանազան տօնական առիթներով գեղեցիկ դարձուածքներ արտասանել եւ գրել, այլ պէտք է լուրջ կերպով նայել գործին եւ ձգտել դէպի նախապատրաստութիւն։ Այս միտքը ընդունում է եւ Տեղեկագրի Յառաջաբանը, ու նրան նայելով՝ հէնց դրա համար էլ կազմել է «Միութիւնը»։ «Շատ բնական էր, որ հայ ուսանողը բարձրանալով իր անհատականից, եսականից, ջանար հասարակական առաքինութիւններով օժտուելու»,—ահա ինչ ձեւով եւ նպատակով է ստեղծել «Միութիւնը»։ Կարդալով Յառաջաբանի այս տողերը, ընթերցողը իրաւունք ունի մտածելու, որ «Միութեան» ստեղծողները ոչ մի զոհաբերութեան առաջ չեն կանգ առնիլ իրենց նպատակին — հասարակական առաքինութիւններին — հասնելու, քանի որ նրանք «բարձր են եսականից»։ Շատ ուրախալի մի երեւոյթ... Բայց մեր ուրախութիւնը գուցէ վաղաժամ լինի... Տեսնենք։

Ամէնից յայտնի է, որքան լուրջ պահանջ է գնում այսօր մեր դժբախտ հայրենիքը իր ներկայ եւ ապագայ սերունդներին, իր ամէն կարգի «առաջնորդողներին»։ Հայութիւնը կանգնած է այսօր կորստեան ճանապարհին։ Տաճկահայը քիւրդի եւ տաճկի սրից ազատումէ, որպէսզի սովին, գաղթականութեան եւ կրօնափոխութեանը զոհ գնայ, սովից, գաղթականութիւնից ու կրօնափոխութիւնից ազատում է, որպէսզի տաճկի եւ քիւրդի սրին զոհ գնայ։ Նախանձելի չէ հայի դրութիւնը եւ ուրիշ երկիրներում, ուր կուլտուրական եւ այլ ճնշումները սպառնում են ոչնչացնել նրա ազգային ինքնուրոյնութիւնը։ Մեր թշնամիների բանակում տիրող գլխաւոր նպատակը՝ ջնջել հայութեան գաղափարը՝ ամէնքին յայտնի է, եւ այդ նպատակի համար ոչ մի միջոց, որքան էլ նա վայրենի, ստոր եւ կեղտոտ լինի, չի խնայւում։

Իրերի այսպիսի դրութեան ժամանակ մեր հայրենիքը արդարացի կերպով կարող է պահանջել իր ապագայ սերունդից, որ նա իսկապէս «բարձրանայ եսականից» եւ լուրջ կերպով մտածի որոշ միջոցներ ձեռք առնել ներկայ հայակորուստ պայմաններին հակակշիռ ներկայանալու։ Ահագին գործ ունի ուրեմն կատարելու մեր ապագայ սերունդը, ապագայ «գործիչն ու առաջնորդողը»։ Մանաւանդ Եւրոպայի հայ ուսանողութիւնը, որ ապրում է ազատ երկիրներում, տեսնում է այն կուլտուրական առաջադիմութիւնը, որ անում է Եւրոպան, պէտք է խոր կերպով զգայ մեր ազգի տագնապալից դրութիւնը եւ ձգտի փրկելու Ժողովուրդը իր ծանր կապանքներից։ Գտնէ թեթեւացնելու այդ կապանքներ։ Ահա այսպիսի մտածմունքներն են, որ իրաւունք են տալիս պահանջելու, որ «Միութիւնը» կանգնած լինի ժամանակակից առաջնակարգ կարիքների հողի վրայ, որ ուսանողների «հասարակական առաքինութիւններով օժտուելուն» ծառայելով, «Միութիւնը» ամենագերագասելի տեղ տար հայրենիքի քաղաքական դրութեան մասին մտածելու խնդրին։

Բայց որպիսի՜ հիասթափութիւն...

Թերթելով ոգեւորուած բանաստեղծական Յառաջաբանի միւս երեսը, այնտեղ կարդում ենք. «Միութիւնը զուտ ուսանողական բնաւորութիւն ունի, ըստ ամենայնի մի իսկական ուսանողին նպատակայարմար եւ թոյլատրելի սահմանների մէջ է ամփոփուած եւ որեւէ քաղաքական միտք հեռու է իր նպատակից»։

Որքա՜ն ցինիզմ... «Եւրոպայի հայ ուսանողական Միութիւնը» բացարձակ յայտնում է արար աշխարհին իր ցածհոգի վախկոտութիւնը. իր ազգը ջնջել ձգտող կառավարութիւններին նա սրտապատառ յայտարարում է, որ ինքը միայն այնպիսի հարցերով է զբաղւում, որոնք «թոյլատրելի» են ամէն մի հաւատարիմ հպատակի... Ահա որ աստիճան զգայուն են մեր ապագայ «առաջնորդողները» դէպի արեան ու անթիւ հալածանքների ծովում խեղդուող հայ ժողովրդի ցաւերը...

Ցինիկնե՛ր, եթէ դեռ ուսանողական նստարանի վրայ, ձեր ներկայ երիտասարդ հասակում եւ ազատ Եւրոպայում նստած, այդքան քնքոյշ ակնածութեամբ էք վերաբերում դէպի ձեր անձնական ապագան. եթէ դուք այժմեանից իսկ loyal դրութիւնը եւ սեփական կարիերին չվնասելու հաշիւները ունիք աչքի առաջ, — միթէ՞ չէիք կարող խղճովին լռել կամ գոնէ աւելի

համեստ կերպով խօսել «գործիչների» եւ «առաջնորդողների» ձեր ապագայ դերի մասին։ Ո՞ւր պիտի առաջնորդէք դուք հայ ազգը, ո՞ւր...

Մի մոռացէք, loyal պարոններ, որ պատմութիւնը կընում է իր ընթացքով, որ առհասարակ իւրաքանչիւր պատմական շրջան իր որոշ պահանջներն ունի, որ ճնշումը ազգերի կեանքում միշտ առաջ է բերում հակաճընշումն, եւ եթէ դուք, վախկոտներ, ստրկական փոքրոգութեամբ այսօր չէք կամենում հանդիսանալ այդ անհրաժեշտ հակաճնշումն, ապա դուք չէք կարող «առաջնորդել» հալածող, մորթող, ճնշող հայ ժողովուրդը։ Ձեր ընտրած հաւատարմութեան ճանապարհով, այո, դուք անձամբ կարող էք իհարկէ շատ առաջ գնալ, բայց ինչո՞ւ պէտք է հետեւի ձեզ ժողովուրդը։ Նա՞ է կարօտ ձեր օգնութեան թէ դո՞ւք պէտք է պահանջէք նրանից ձեր կարիերիստական հակումներին բաւարարութիւն տալ։ Փքուն ոճերով, ինչ-որ «ընդհանուր իդէալներով», «լուսաւորութեան զամպարներով» ձեր մերկութիւնն է՞ք ցանկանում դիմակաւորել։ Որո՞նք են ձեր «ընդհանուր իդէալները»...

Օ՜հ, ո՜րքան «խելացի» եւ «խոհեմ» մարդիկ էք դուք,— այնքան խելացի, այնքան խոհեմ, որ ձեր փտած պաղերն անգամ կը հասկանային ձեզ եւ դոհ կը մնային ձեզանով, ձեր ժոռածելու եղանակով, ձեր բռնած դիրքով։ Խօսքերով բարձրանալ եսականից, թղթի վրայ թմբուկ զարնել հասարակական պահանջների մասին, իսկ իրականութեան մէջ դաւաճանօրէն աչք փակել այսօր ամբողջ հայութեան համար առաջնակարգ մի պահանջի վրայ եւ մտածել անձնական լեզալ ապագայի մասին—ահա ձեր «իդէալները»...

Սակայն մենք կուզենայինք հաւատալ, որ Եւրոպայի ուսանողութիւնը ընդհանուր առմամբ այդչափ ընկած չէ եւ որ նա պարունակում է իր մէջ թարմ ու իր պատմական կոչման նուիրուելու պատրաստ տարր։ «Միութեան» համագումարին մասնակցել են 24 հոգի, այն ինչ ուսանողների թիւը 230 է (ըստ Տեղեկագրի)։ Ահա մի հանգամանք, որ կարող է գրաւական լինել մեր յոյսերի համար։

Մենք դիմում ենք Եւրոպայի բոլոր ուսանողներին։ Թող նրանց զգայուն ներկայացուցիչները ստուար թւով ներկայ գտնուեն ապագայ համագումարներին, աշխատեն ազատել «Միութիւնը» «թոյլատրելի սահմաններից», աւելի կենդանի եւ ակտիւ հետաքրքրութիւն ցոյց տան դէպի հայ ժողովրդի դրութիւնը եւ նրա դատը ու վեհ համարձակութեամբ արտասանեն մեր կարիերիստ «առաջնորդողների» համար սարսափելի նշանաբանը — յեղափոխակա՞ն գործունէութեան համար նախապատրաստուութիւն... Բաւական է, որքան «խոհեմ» մնալով՝ մեզ վրայ մտածեցինք։ Այդպէս էին անում եւ «իդէալների» կամ «զամպարների» մասին չխօսող մեր հայրերը... *)։

ՈՒՍԱՆՈՂ

*) Պարտք ենք համարում յայտնել, որ ներկայ նամակից մենք հանել ենք մի ամբողջ կտոր, որ վերաբերում էր յատկապէս հայերի դրութեանը Ռուսաստանում, միաժամանակ հաղորդելով այդ մասին հեղինակին։ ԽՄԲ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԷՆ

փետրուար 5

Մեռա՜ւ, թաղեցինք, լմնցաւ, կարծեցինք Աշըգեանը, բայց չէ՛. հայոց չսիրած պատրիարքը „ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ“ խորագրով աշխատութիւն մը ձգած է, որ իր հեղինակին պէս փորձանք մը կըսպառնայ ըլլալ մեր գլխուն։ Ադ գրութեան մէջ Աշըգեան կը պատմէ, կը քննէ ու կը պարզաբանէ մեր 1890-է մինչեւ օրերս անցուցած պատմութիւնը։

Աշըգեան նախ ազգային երիտասարդութիւնը և ապա Իզմիրլեան սրբազանը մեղաւոր ու պատասխանատու կը բռնէ իր գրուածքին մէջ մեր աս վերջին տարիներու արիւնլուայ դէպքերուն առթիւ։

Շատերուն աչքը լո՛յս. իրենց գաղափարակից ընկերմը ալ աւելցաւ։ Մէկ տարբերութիւն մը կայ միայն՝ որ Աշըգեանը շատ հեռու չ'երթար իր ամբաստանութիւններու մէջ։

Աշըգեանի թողած աս գանձը ինկեր է կառավարութեան ճանկը, որ կ'ուզէ յարմար առիթէն օգտուիլ։ Գործը յանձնուած է Աբրահամ էֆ. Ֆրանկեանի և քաջածանօթ Վահան վարդապետի („Լոյս“-ի խմբագիր) խնամքին, որ տպագրի տէրութեան հաշիւով։ Աղէտ մը Համիտի համար պատասխանատուութիւնը իր վրայէն Իզմիրլեանի և հայերու վրայ նետելու համար։ Փորձանք մարդիկ կան որոնց մահն ալ աղէտ կը ծնի...

*

Էրզրումի վիլայէթին մէջ երկու հայ գիւղեր, շուրջ 300 ընտանիք, օրթոդոքսութեան դիմեր են, յուսալով աս ճամբով ռուսական հիւպատոսարանի պաշտպանութիւնը վայելել։

Աս տխուր երեւոյթի պատճառը հարկերն են։

Յայտնի է որ ամէնողորմած սուլթանը 1894-96-ի իր սարքած ջարդերէն վնասուած նահանգաց հայերու զինուորական հարկերը նուիրեր էր։ Երկու տարի հազիւ անցած էր, երբ „նուէրը“ վերածուեցաւ յետադարձման. տարբեր խօսքով՝ ատ գաւառներուն անօթի հայերը կառավարութեան երկու�երեք տարուան զինուորական տուրք պարտք մնացած եղան։

Ադ տուրքին չափն է ամէն մէկ արու անձի համար, ծնած օրէն մինչեւ մահ, տարեկան 37½ դահեկան, որ փուլի, չավուշի և այլ ծախքերով տարեկան 42-45 դահեկանի կը հասնի։ Պարզ է ուրեմն, որ ադ պարտքը հիմակ հասած կըլլայ բաւական պատկառելի գումարի մը։

Վերջին 2 տարիներու առերեւոյթ խաղաղութիւնը Եըլտզի կատաղած գայլի մեծասրտութիւնը շնաքաղցութեան փոխեց։ Տարբեր իրատէով մը 99-ի վերջը իմացուց Սուլթան հայոց պատրիարքարան, որ հայերը պէտք է վճարեն 95-97-ի յետամնաց հարկերը։ Պատրիարքը միջնորդեց, թախանձեց յետաձգել քանի մը տարի եւ մինչեւ որ ներկայ տիրող թշուառութիւնն ու սովը վերջանան և հարկատուները հնար ունենան վճարելու։ Եըլտզէն և Բ. Դռնէն դրական պատասխաններ եղան, բայց գաւառները գաղտնի հրահանգներ գնացին խստիւ ժողվելու յետամնաց հարկերը։

Ամենէն շատ խստութիւններ գործադրուած են Էրզրումի յիշեալ երկու գիւղերուն մէջ, ուր արդէն սովը և աղքատութիւնը ծայրայեղ էին։ Բնականօրէն՝ երբ ոչինչ կայ ուտելու, հարկերն ալ վճարելու հնար չկայ։ Հարկահանները գիւղացիներու վերջին ստացուածքները կը ծախեն հարկերը գանձելու համար, նորէն արդիւնք մը չ'ելլար։

Բազմաթիւ ապօրինութիւններու և գազանութիւններու մէջ մէկ դէպք մը վերջնականապէս վճռող կը հանդիսանայ։

Ամենէն յարգուած պատուաւոր գիւղացի մը կունենայ սիրուն կին մը։ Հարկահանները հարկը կ'ուզեն։ „Տարէք ինչ որ ունիմ", կըսէ գիւղացին։—„Դրամ չունիս, կինդ տուր", կը պահանջեն աստիճանաւորները և կինը զօրով կը քաշեն տանին։ Ա՛ն անլուր գազանութիւնը կըստիպէ երկու գիւղերն ալ ատ քայլն ընել։ Միւս կողմէն ռուս միսիոնարներ վերջերս սկսած են ատ կողմերը յաճախ երևալ և միշտ ռուսական պաշտպանութիւն ու դրամ խոստանալ օրթոտոքսութիւն ընդունողներուն։

Էրզրումի վալին դիմած է ռուս հիւպատոսին, բացատրութիւն պահանջելու ատ երևոյթի մասին. հիւպատոսը ըսած է, որ ամէն մարդ ազատ է իր ուզած կրօնին հետևելու։ Թիւրք կառավարութիւնը մեծ՝ մտահոգութեան մէջ է. սիրտը վախը առած՝ հրաման ըրեր է վալիին որ այդ հայերուն հաւատափոխութեան թուղթ չի տրուի։

Օրմանեանն ալ... վրդովեր է. որովհետև իր միսը վատ հաղորդիչ է, հեռագրեր է Կարինի առաջնորդ Զաւէն վարդապետին որ ամէն ջանք իգործ դնէ հաւատափոխութեան առջևը առնելու համար։ Լուր կայ թէ առաջնորդ վարդապետը յաջողեր է ետ համոզել օսմանեան կոպիտ բարբարոսութենէն ու անասնական անխղճութենէն սիրտերնին էրած, յուսահատ ժողովուրդը։

Թիւրքերը որոնք ամենայտնի գլուխ գործոցը տուին մարդկութեան, իրենց ազգային հանճարի ծնունդ,—մարդագազան մը—կը կտրեն ան ճիւղը, որուն վրայ կայնած են՝ գործքով անմահացնելու համար մօլլա Նասրէտտինի յիշատակը։

Մարտ 20

Արթին փաշա.—Երեկեան լուրերը Արթինին կը վերագրէին քսու Մարկոս Նաթանեանէ, Պիւլպիւլեանէ և այլ ադ դասակարգի տիղմերէ լրտեսական արբանեակներու գարշելի խումբ մը կազմելու փառապանծ գործը, իսկ այսօր բաւական դրական աղբիւրներէ կ'իմացուի, որ Արթին կ'աշխատի Օրմանեանի հրաժարականը ընդունել տալ, ոտքին տակը քիչ մը օճառ քսել որ աւելի դիւրին սահի...

Արդեօք ի՞նչ փորձաւ ունի Արթին՝ Օրմանեանի հրաժարականն ուզելով։ Նոր ընտրութիւններ ստեղծել, որ պղտոր ջուրին մէջ աւելի դիւրի՞ն՝ որսայ, թէ ժողովուրդին բարիք մը ընել... Ուրիշ փաստ մըն ալ։ Ասկէ 10-15 օրի մը չափ առաջ Արթին, լոկ իր կողմէն, սուլթանին ուղերձ մը կը ներկայացնէ, որու մօտաւոր բովանդակութիւնը հետևեալն է. „Ռուսիա հայերը կը հալածէր։ Դպրոցները փակեց, կալուածները խլեց, բանտերը լեցուց և այլն։ Բայց այսօր յանկարծ իր ամբողջ վարմունքը փոխած է. պաշտօնական թերթի հայակեր խմբագիր Վելիչկօն հեռացուց. մեզի վերաբերող 50,000 գաղթականները կը պաշտպանէ, և այլն։ Ա՛ն ամէնը պարզ կը ցուցնեն որ հայ տարրի սիրտը գրաւել կ'ուզէ և դա՛ մը կը նիւթէ մեր դէմ։ Լաւ էր՞ը ըլլայ, որ մենք ալ հայ տարրին քանի մը դիւրութիւններ տանք և առ մեզ տաքցնենք, մեզի հետ նորէն կապենք, իբր հակահարուած մը ռուսական քաղաքականութեան"։ Կ'ըսուի որ ա՛ս ուղերձը իր ազդեցութիւնն ըրած է, և „պետական շնորհներու" տոպրակը պիտի բացուի նորէն։ Երանի՜ հաւատացողներուն...

*

Երկաթուղիներու խնդիր.—Փետրուար 3/14-ին սուլթան իրատէ մը հանեց, որով կը յայտնէր թէ սկզբունքով համաձայն է Ղարս-Կարինի գիծը ռուսներու տալ շինելու։

Զինովիէֆ փետրուար 16/28-ին գրաւոր դիմում մ'ալ ըրաւ և ուզեց Սամսունէն Սեբաստիա գիծ շինելու իրաւունքը։ Նոյն գրութեան մէջ Զինովիէֆ կը պահանջէր որ Հիսիսային Անատոլիի մէջ ամէն շինուելիք գիծերը վերապահուին միայն ռուսներուն, և կաւելցնէր որ սուլթանի տուած իրատէն ինքը բաւարար չի դիտէր, այլ կուզէ աւելի որոշ խոստում։

Փետրուար 24-ին Բ. դուռը յայտնեց Զինովիէֆի որ ինք այլևս մտադիր չէ ոևէ օտար պետութեան մը Անատոլիի մէջ երկաթուղի շինելու թոյլտուութիւն ընել. ուրեմն Ռուսիոյ ալ չի կրնար ոևէ մենաշնորհ տալ։ Զինովիէֆ պատասխանեց որ ադ իր պետութեան համար ընդունելի պատճառաբանութիւն մը չէ. „ինչպէս միւս պետութիւններուն մինչև օրս տուած էք, անանկ ալ մեզի կը զիջանիք"։

Բ. Դուռը, նեղը մնալով, ուզեց օգտիլ Կիպրոսի դաշնագրութենէն և դիմեց Անգլիոյ։

Սալիսպըրի պատասխանած է Թուրքիոյ ա՛ս դիմումին, թէ „սուլթանի կառավարութիւնը չգործադրեց խոստացած բարենորոգումները և հայկական ջարդերը ձեռնարկելով՝ ինքնըստինքեան լուծեց Կիպրոսի դաշինքը. ուրեմն մենք զմեզ պատասխանատուութենէ ազատ կը համարինք"։

Հիմակ թող երթայ Համիտ Կիպրոսը յետ առնէ...

Անգլիայէն յոյսը կտրած, Բ. Դուռը դիմեց ռուս կառավարութեան որ քիչ մը զսպէ իր դեսպանին ծայրահեղ եռանդը։ Կըսուի թէ Մուրավիէֆ պատասխանած է, որ Զինովիէֆի առաջարկներէն ոչ մին կրնայ փոխել։

Ան ատեն Զինովիէֆ 50,000 գաղթականներու, քիւրտերու զսպման և այլ սովորական դարձած ճնշման միջոցներու վրայ աւելցուց և մէկ նորը։ Իսկոյն լրագիրները սկսեցին լուրեր տարածել, որ Պուլկարիա անկախ թագաւորութիւն պիտի հրատարակի Ռուսիոյ օգնութիւնով և, իբր վարձատրութիւն, Պուրկազը Ռուսիոյ պիտի տրուի իբր նաւային կայարան։ Բայց Պուրկազէն Պոլիս քանի մը ժամ է... Ա՛դ չափ մօտիկ... Սուլթան սարսեցաւ, բանակցութիւններն աւելի դիւրացան և վերջապէս մարտ 10/22-ին երևցաւ սուլթանի նոր իրատէն որ կիմացնէ ում որ անկ է թէ „ցանկալով իր և Ռուսիոյ մէջ եղած դարևոր անկեղծ բարեկամութիւնը (!!) աւելի հաստատել" ևն, ևն, հետևեալը կը հրատարակէ և կը հաստատէ.

ա) Հիւսիսային Անատոլիի—այսինքն Քաստամունիի, Տրապիզոնի, Բաղէշի վիլայէթներու և Սեբաստիոյ վիլայէթի մէկ մասին մէջ, իբաց առեալ մինչև օրս օտար

պետութիւններու զիջած գիծերը՝ ամէն նոր երկաթուղի շինելու իրաւունքը կը պատկանի միայն Ռուսիոյ։

բ) Ռուսական պետութիւնը չէ որ պիտի շինէ ատ գիծերը, այլ ռուսական դրամատէրերու սէնտիքաներ (աղուէսը չէ, անոր պոչն է) նոյն իրաւունքներով ու պարտականութիւններով, ինչ որ ունին Պաղտատի և Անատոլիի գիծերուն գերման սէնտիքաները։

Ուրեմն Անկօրիայէն մինչև Սեբաստիա, Սեբաստիայէն Խարբերտի վրայով մինչև Վան, և Հերակլէայէն մինչև Ատա-Պազար (աս երկիք գիծերն ալ արդէն գերմաններու է զիջած) եղած գիծերուն մէջ ամբողջ տարածութիւնը պաշտօնապէս ճանչցաւ իբր ռուսական ազդեցութեան վայր...

Եւ ռուսական արջը իր երկաթէ թաթերը պիտի ջանայ խոթել ադ հայաբնակ գաւառներուն սրտին մէջ... Բայց ո՞վ է ան մահկանացու մարգարէն որ կրնայ գուշակել քաղաքական անկայուն քամիներու վաղուան ընթացքը...

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ԻՆՆԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 15 փետրվար

„Այրուած սրտին ջանն էլ մեծ մխիթարութիւն է“։

Այդ ժողովրդական խօսքը երևի դուք էլ ինձ հետ կը կրկնէք, երբ խմանաք՝ թէ այս բոպէիս ինչ բերկրութիւն է տիրում ամբողջ Կովկասում այնպիսի մի չնչին դէպքի առիթով, ինչպիսին է Վ. Վելիչկոյի հեռացնելը „Կավկազ“ լրագրի խմբագրի պաշտօնից։

Ես բոլորովին մտադրութիւն չ՚ունէի մի նամակի նիւթ դարձնել այդ ա ն ա ր գ անձնաւորութիւնը, որի անունը սրանից մի տարի առաջ, իմ երկրորդ նամակում, ա ն ց ո ղ ա բ ա ր միայն յիշատակել եմ, զարմանք յայտնելով, որ կովկասեան բարձր իշխանութիւնը „հնարաւոր համարեց երկրի միակ պ ա շ տ օ ն ա կ ա ն լրագիրը յանձնել մի այնպիսի կլասիկ-ֆէերիստի, ինչպիսին է Վելիչկո՝ ըտես-խմբագիրը“։

Աւելին չ՚արժէր։

Սակայն այսօր, թէև տհաճութեամբ, ստիպւած եմ կանգ առնել այս դէպքի վրայ, որ Կովկասի հայերի „քաղաքական ջանը“ կարող էք համարել։ Դրա համար մի քանի պատճառներ ունեմ։ Ն ա խ ա յն, որ դա մի լաւ առիթ է՝ հաղորդելու ձեզ մի քանի Ն ո ր գ ծ ե ր մեր դժբախտ կեանքից. ե ր կ ր օ ր դ՝ այն, որ այդ առիթով բաւական տաք վէճ է բացւած Պետերբուրգի և Մոսկվայի երկու բանակի—ազատամիտ և յետադէմ—ռուս մամուլի մէջ, և ե ր բ օ ր դ՝ այն, որ ինչպէս իմացայ, լուրը հասել է, իբրև կարևոր նորութիւն, նոյնիսկ անգլիական մամուլին։ Standard-ում, օրինակ, այդ դէպքը ասում են, հաղորդւած է այս ձևով. „Կովկասեան հայերի վերաբերմամբ յանկարծական փոփոխութիւն է նկատւում ռուսաց կառավարութեան վարմունքի մէջ. Կովկասում արգելւեց (?) մի հակահայկական լրագիր. կառավարչապետը, իշխան Գօլիցին, վերջին տասնևհինգ օրւան մէջ փոխւեց“...

Դուք տեսնում էք ուրեմն, որ մի սոսկ խմբագրի փոփոխութիւնը աւելում է իբր կ ա ռ ա վ ա ր չ ա կ ա ն տ ր ա մ ա դ ր ո ւ թ ե ա ն փ ո փ ո խ ո ւ մ ն, հակահայկական լրագրի ջնջումն և Նոյնիսկ իշխան Գօլիցինի այլակերպութիւն։ Գեղեցի՜կ երազներ...

Եթէ ուզում էք, որ մեկնեմ ձեզ այդ „երազները“, համբերութիւն ունեցէք, խնդրեմ, մի քիչ հեռից լսեր։

Սրանից աւելի քան կէս դար առաջ էր — որքան յիշում եմ, 1847 թւին — որ իշխան Վ.օրոնցով, ամենախելօք փոխարքան Կովկասում, հիմնել տւեց պաշտօնական մի լրագիր „Կավկազ“ անունով, որի նպատակը պիտի լինէր մի կողմից ուսումնասիրել Կովկասը և հարևան երկիրները և միւս կողմից՝ նպաստել նոր նւաճած երկիրներում ապրող ազգերի փոխադարձ համերաշխութեան և նրանց մերձեցման Ռուսաստանի հետ։ Դրա հետ միասին օրինագծւած է. — խմբագիրը նշանակւում է կառավարութեան կողմից 5 տարին մի անգամ. լրագիրը ստանում է գանձարանից տարեկան նպաստ 4000 ռուբլի (աւելի քան 10 հազար ֆրանկ). բացի դրանից լրագրի ստացումը պարտաւորիչ է բոլոր պաշտօնական հիմնարկութիւնների—աւելացրէք և անձերի—համար, ինչպէս և պարտաւորիչ է բոլոր կառավարչական յայտարարութիւնները այնտեղ տպագրել — մի հանգամանք, որ դարձնում է պաշտօնական լրագիրը վերին աստիճանի շահաւէտ ձեռնարկութիւն խմբագիր-հրատարակչի համար։ Այդպիսի պարզ պատճառով է, որ դէպքեր են եղել, երբ շատերը պատրաստականութիւն են յայտնել վերցնել այդ լրագիրը առանց կառավարչական 4000 ռուբլի նպաստի, որովհետև, առանց դրան էլ միմիայն պարտաւորիչ յայտարարութիւններից և ստիպողական բաժանորդներից նա կարող է տալ տարեկան մօտ 20 հազար ռուբլի (աւելի քան 50 հազար ֆրանկ) զուտ արդիւնք, եթէ գործը լաւ տարի։

Տարիներ առաջ, երբ կովկասեան ազգերի մէջ թշնամութիւն սերմանելը ձեռնտու չէր տեղական կառավարութեան, „Կավկազ“-ի խմբագրի պաշտօնը տրւում էր սովորաբար կովկասեան կեանքին ծանօթ և որոշ անուն ունեցող անձանց։ Այդպէս, օրինակ, շատ անգամ այդ լրագրի խմբագրութեան մէջ եղել են, իբր ղեկավարներ, հայեր, ինչպէս և եղել են դէպքեր, երբ լրագրի խմբագրութիւնը պաշտօնապէս յանձնւել է վրացի գրողի կամ գործողի։ Եւ վերջապէս, եթէ ուէէ խմբագրի ընտրութիւնը եղել է անյաջող ու նա փորձել է դուրս գալ իր „դերից“, կովկասեան փոխարքայի խորհուրդը, որ այդ գործի բարձր վերահսկողն է, անմիջապէս ներշնչել է ինտրիգներ լարող խմբագրին, որ դրանք „իր պարտաւորութիւնների մէջ չեն մտնում“...

Հազար ափսոս, որ այդ „երջանիկ ժամանակները“ վաղուց անցել են, և այժմ, ընդհակառակը, երբ խմբագիրը չի ուզում „իր պարտաւորութիւններից դուրս գալ“, նրան կանչում և հասկացնել են տալիս, որ նա չի կարողանում ծառայել „ռուսական շահերին“ և ուրեմն անընդունակ է։ Այսպէս, օրինակ, 1892 թւին, „Կավկազը“ յանձնւեց մի օրինաւոր ռուս մարդու, Իւրիյ Միլիւտին անունով, որ նպատակ դրեց չ՚ենթարկւել „չինովնիկական ազդեցութիւնների“, այլ ծառայել տեղական շահերին անկեղծ կերպով։ Միլիւտինի ուղղութեանը չհաւանեցին, և շատ շուտով նա խիստ ընդհարումներ ունեցաւ իր „մեծաւորների“ հետ, որոնք սկսեցին արգելել նրան գրել այն, ինչ ինքն էր ուզում, և ընդհակառակը՝ ստիպել, որ գրի այնպիսի

բաներ, որ նա երբեք չէր ուզում։ Հետևանքը այն եղաւ, որ մեծ եռանդով գործին կպչելով, պ. Միլիուտին՝ հազիւ 6 ամիս անցած, յուսահատուեց և լոկ իբրև պաշտօնական խմբագիր՝ իր անունը ստորագրեց լրագրի տակ, մինչև 5 տարուայ պայմանաժամը լրանալը, երբ նա իրեն երևի երջանիկ համարեց, ազատուելով այդպիսի „պետական“ գործունէութիւնից...

Ահա այդ ժամանակ՝ 1897 թուին էր, որ հրապարակ եկաւ մի պարոն, Վասիլիյ Վելիչկո։ Նա ծառայող էր. իբրև „չինովնիկ“՝ աննշան և անյայտ։ Եթէ քիչ շատ յայտնի էր, այդ միայն իր ոտանաւորներով, որոնց մէջ շատ ոգևորուած երգում էր „սոխակ և վարդը“, երբեմն բաւական աջող, հարիւր և միերորդ անգամ ապացուցանելու համար, որ շատ աւելի հեշտ է անմեղ ոտանաւորներ գրել „սոխակի և վարդի“ կամ „ջահիլ վրացուհիների աչքերի“ մասին, քան թէ հասարակական հարցեր վճռել և արդարութեան հաւատարիմ մնալ։ Հայերի բախտին էլ այդ ժամանակ անցողական շրջանն էր. Շերեմետիեվ վաղուց մեռած էր, նոր կառավարչապետը դեռ չէր եկել և գործերի ղեկը անցել էր դիւանատան կառավարիչ Միցկեվիչի ձեռքը, որ, ինչպէս գիտէք, ամէն տեղ վտանգ էր տեսնում և կարիք՝ ուժեղացնելու „ռուսական գործը“։ Թէ ինչ „պայմաններ“ կնքուեցին դիւանատան փակ դռների յետև՝ Միցկեվիչի և Վելիչկոյի մէջ— դա իհարկէ վարչական գաղտնիք է. այսքան է միայն յայտնի, որ Վելիչկո հաւատացրել էր Միցկեվիչին, թէ ինքը այնքան մօտ բարեկամ է իշխան Գոլիցինի հետ — լուր կար արդէն նրա Կովկաս գալու մասին — որ Պետերբուրգ եղած միջոցին առանց նրան մի օր չէր կարող անցկացնել... „Ես նրա հետ դուռ-ով եմ խօսում“, հաւատացնում է Վելիչկո, ուղենալով իր ձեռքը ձգել դիւանատան զօրեղ կառավարչին։ „Ուրեմն սա ինձ պէտք կը գայ“, մտածում է Միցկեվիչ, յանձնել տալով „Կավկազը“ մի արկածախնդրի, որ Պետերբուրգից Թիֆլիս էր ընկել „բախտ որոնելու“։

Այս առիթով մի անեկդոտ։ Երբ Գոլիցին Թիֆլիս է գնում և, ըստ սովորութեան, Պալատի դահլիճում ընդունելութիւն է նշանակում բոլոր պաշտօնական անձանց, այնտեղ է լինում և Վելիչկո։ Ներկայացնողն է Միցկեվիչը։ Երբ հերթը հասնում է Վելիչկոին, պ. Միցկեվիչը՝ ժպիտը երեսին՝ ասում է՝ „Ձերդ պայծառափայլութիւն. պ. Վելիչկո“, սպասելով, որ իշխանը կը գրկէ Պետերբուրգի իր „մերձաւոր“ բարեկամին։— „Վելիչկո՞... կրկնում է սառնութեամբ իշխանը. կարծեմ, „Կավկազ“ լրագրի խմբագիրը պէտք է լինի... Քանի՞ տարի է այստեղ էք“ ... Վերջին հարցը ապշեցնում է խաբուած Միցկեվիչին. „Ինչպէ՞ս, իշխանը նոյնիսկ չի ճանաչում Վելիչկոին, մինչդեռ սա հաւատացնում էր, որ Պետերբուրգում ամէն օր միասին էին ժամանակ անցկացնում“... Երկու օր յետոյ, ասում են, երբ Միցկեվիչը տեսնում է անզուգական խմբագրին, չռում է աչքերը և արտասանում. „Սա ի՞նչ կը նշանակի“ ... — „Գիտէք, կմկմում է Վելիչկո. մի փոքրիկ թիւրիմացութիւն կայ. սա այն Գոլիցինը չէ, որին ես ճանաչում ես. սա, երևի, նրա ազգականն է“... Մի կարծէք, որ դրանից յետոյ Միցկեվիչը իր երեսը դարձրեց այդ աշկարայ խաբեբայից։ Բոլորովին ոչ։ Ընդհակառակը աւելի բարեկամացաւ, որովհետև շատ չանցած՝ տեսաւ թէ ինչպէս „վելիչկոյեան մտքերը“ արձագանք են գտնում կառավարչապետի պալատում, և նոյնիսկ այդ մտքերի „ստեղծագործողը“ անձամբ մուտք է գտնում այնտեղ...

Երկար կանգ չեմ առնում Վելիչկոյի երեք տարուայ „գրական գործունէութեան“ վրայ, քանի որ դա, իր հիմնական կէտերում գոնէ, շարունակութիւն է այն ուղղութեան, որի դրօշակը այնքան յանդուգն կերպով պարզեց Կատկով „Մասկովսկի Վեդոմոստի“-ի նախկին ազդեցիկ խմբագիրը, և որի ներկայացուցիչներն են այժմեան Ռուսաստանում Սուվորին — „Նովոյե Վրեմիայ“-ի տէրը, Կամարով—„Ավետ“-ի խմբագիրը, և Գրինգմուտ— „Մասկովսկի Վեդոմոստի“-ի խմբագիրը, իրենց մի քանի երկրորդական աջակիցներով։ „Ռուսական շահերի“ անունից խօսող այդ խումբը մի նպատակ միայն ունի, սեփական շահ. և այդ է պատճառը, որ նրանք նոյնիսկ իրենց սիրած „գաղափարներին“ մի րոպէում դաւաճանում են, հէնց որ նկատում են ոևէ փոփոխութիւն կառավարչական շրջաններում։ Հանգուցեալ հրապարակախօս Ակսակովի նման ազնիւ մարդիկ չկան այժմեան „ռուսոֆիլների“ շրջանում։ Այժմեան հոսանքով՝ սլավոնականութեան գաղափարը տարածել—կը նշանակի քարոզել, որ բոլոր միւս ազգերը խարոյկի մատնուեն. ուղղափառութեան շահերը պաշտպանել՝ կը նշանակի միւս դաւանութեան պատկանողներին բռնի կերպով ուղղափառ դարձնել։

Ահա այդ „քուրայում“ բուռած՝ Վելիչկո սկսեց իր „գրական գործունէութիւնը“, նորանոր զինակիցներ գտնելով կովկասեան բարձր իշխանութեան մէջ։ Այդ գործունէութեան գլխաւոր նպատակը — իհարկէ դարձեալ սեփական շահն էր։ Թիֆլիսում շատերը լսել են, որ նա նոր մտած իր պաշտօնի մէջ՝ սկսեց հեռացնել նախկին խմբագրութեան բոլոր աշխատակիցներին, ասելով. „Յիմարութիւն կը լինի, եթէ հինգ տարուց յետոյ հարիւր հազար չ՚ունենամ“։ Նրա այդ շահասիրական պոլիտիկան պարզելու համար աւելորդ չէ մի փաստ յիշատակել։ Թիֆլիսում, ինչպէս գիտէք, բացի „Կավկազ“-ից կան էլի երկու ուրիշ ռուսերէն լրագիրներ. մինը՝ աւելի գրական-քաղաքական բովանդակութեամբ—„Նովոյե Աբազրենիէ“, միւսը՝ աւելի լուրերի և յայտարարութիւնների լրագիր — „Տիֆլիսկիյ Լիստոկ“, շատ տարածուած։ Մի օր, քանի դեռ չէր բացուել իր գոյնը, տեսնելով առաջինի խմբագիրներից մէկին, Վելիչկոն ասում է. „Գիտէք, յարգելի բարեկամ, իմ և ձեր լրագիրները իբրև գրական-քաղաքական թերթեր, միևնոյն նպատակը, միևնոյն դերը ունեն. այդ պատճառով մենք պէտք է ձեռք ձեռքի տանք, համերաշխ լինենք. բայց ես վճռել եմ սպանել, ոչնչացնել „Տիֆլիսկիյ Լիստոկը“, այդ փողոցային թերթը“։ Միւս օրը պ. Վելիչկո ունենում է հետևեալ, իհարկէ, ծածուկ խօսակցութիւնը „Տիֆլիսկիյ Լիստոկի“ խմբագիրներից մէկի հետ. „Գիտէք, սիրելի բարեկամ, ձեր և իմ լրագիրը հակառակորդներ չեն, որովհետև այլ են մեր ծրագրերը, այլ նպատակը, բովանդակութիւնը. այդ պատճառով մենք միշտ բարեկամներ կը լինենք. ուրիշ բան է „Նովոյե Աբազրենիէն“. նա ուղղակի մրցակից է „Կավկազ“-ին. ես ոչ մի միջոց չեմ խնայի և կ՚ոչնչացնեմ նրան իմ գրչով, իմ թերթով“...

Տեսե՞լ էք այսպիսի խմբագիր...

Եւ այդ սրիկան՝ պաշտօնական լրագրի գլխին, պետական շահերի պաշտպանի ծիրանին հագած, ընդունուած նահանգապետի մօտ, նոյնիսկ կառավարչապետի

պալատում և սիրտ առած այդ բոլորից՝ ընդդէմ մի հալածեալ ժողովրդի, որ առանց այն էլ ենթակայ էր հազարաւոր կասկածների — ընդդէմ հայերի։ Այո՛, միմիայն հայերի։ Թիւրքերի դէմ ռուսաց կառավարութիւնը դեռ ոչինչ չի սկսել. վրացիներին բացարձակ հալածելը առայժմ անհեռանկատ գործ է համարւում... Ուրեմն „քաշ կտուրը“ էլի հայն է, որի դէմ այնքան նիզակներ են փորձուած և որի դէմ փորձեց նաև պ. Վելիչկօն։ Շահելով մի քանի բարեկամներ վրացի և թիւրք թեթևամիտ „ղեկավարներից“, պ. Վելիչկօ զլանք յարուցեց ռուս մամուլի օրինաւոր մասում և Կովկասի ռուս ինտելիգենցիայի լաւ շրջաններում։ Լցած անձնական ատելութեան և վրէժի զգացմունքով, կատաղած, որ նոյնիսկ ռուս գրողներից շատերը հրաժարւում են աշխատակցել իր անարգած լրագրին, պաշտօնական լրագրի սանձարձակ խմբագիրը այլևս ոչ մի սրբութիւն չթողեց. ամէն ինչ նրա մատնութեան նիւթ դարձաւ—հայոց հարցը, հայոց դպրոցները, հայոց մամուլը, հայոց եկեղեցին, հայոց ինտելիգենցիան, նոյնիսկ հայոց հոգևորականութիւնը։

„Պաշտօնական լրբութեան“ մի շշափելի ապացոյց տալու համար բաւական է, որ երկու փաստ միայն բերեմ։

Թիւրքաց գազանութիւններից հաղիւ ազատուած գաղթականները ապաստանել են Կովկաս։ Նրանց մերկութիւնը, քաղցը, տանջանքները տեսնողի գլխի մազերը փշաքաղում էին։ Վերջին աղքատը անգամ, առանց խտրութեան ազգութեան, միքանի կօպէկ էր նուիրում՝ այդ թշուառների վիշտը մորմոքելու համար։ Եւ ահա այդ վիթխարի դժբաղդութեան բոպէներին, երբ մի ամբողջ ազգի սիրտը խոցուած էր անբուժելի կերպով, պաշտօնական լրագրի էջերում սկսւում են անպատմելի հայհոյանք, յարձակումներ և նոյնիսկ մատնութիւններ թիւրքական գազանութեան զոհերի և նրանց օգնողների դէմ։ Հանթերը անխնայ էին։ „Պէտք է անմիջապէս նրանց բոլորին յետ քշել այնտեղ, որտեղից եկել են. դրանք իրենց տեղումն էլ լաւ էին“—ահա այդ մարդակեր յարձակումների վերջակէտը։

Սակայն լսեցէք երկրորդ փաստը, աւելի սոսկալին։ 1899 թուի դեկտեմբերին Թիֆլիսի Նահանգի Ախալքալաք գաւառում տեղի ունեցաւ մի սոսկալի երկրաշարժ։ Բազմաթիւ զուտ հայաբնակ գիւղեր, ուր միքանի վայրկեան առաջ եռում էր մարդկային կեանքը, դարձան աւերակների կոյտեր, որոնց խորքերից դեռ լսւում էին մահի հետ կռւող դժբաղդների աղեխարշ ձայները։ Եւ այն բոպէին, երբ կոյտերի տակից դուրս էին բերում հարիւրաւոր զոհերի այլանդակուած դիակներ, երբ կենդանի մնացած կանայք, երախաներ՝ ձմրան ցրտին՝ մի ապաստան չունէին գլուխ դնելու և ոչ էլ մի կտոր հաց իրենց քաղցը հագեցնելու, —այդ միջոցին, ասում են՝, երբ ամբողջ Կովկասում հանգանակութիւն էր սկսուած հայոց օգտին, պաշտօնական լրագրի մէջ Վելիչկօ, կորցրած ամօթը և խելքը, գրում էր. „Դա աստուածային պատիժ է, ուղարկուած հայերին նրանց մեղքերի համար“...

Դժոխքի՜ որդի...

Եթէ կարծում էք, որ այդ չտեսնուած և չլսուած լրբութեան հեղինակը ձեռքից բաց էր թողնում ոևէ առիթ իր մաղձը թափելու համար, — չարաչար սխալւում էք. ամէն առիթ յարմար էր և ամէն միջոց սուրբ՝ նպատակին հասնելու, ուրիշ խօսքով՝ հայերին հայհոյելու կամ մատնելու համար։ Դիցուք Կովկասի ոևէ գաւառում սով է երևում. ժամուլը հրաւէր է կարդում օգնութեան հասնել։ Եթէ գաւառի մէջ հայեր էին լինում, պ. Վելիչկօ խսկոյն կատաղի բողոք էր բարձրացնում, հաստատելով թէ սով չկայ, այլ դա միայն մի միջոց է փող հանգանակել՝ հայկական գաղտնի գործերի համար։ Կամ դիցուք Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հեռացնում էր ոևէ պաշտօնեայի. մատնիչ-խմբագրի առաջին գործն էր լինում իմանալ, հայ է նա թէ ուրիշ ազգից։ Եթէ հայ էր, նա գոչում էր. „գիտէք, նրան հեռացնում են, որպէսզի գործուած զեղծումները հայի վրայ չբարդուեն“. իսկ եթէ հեռացուած պաշտօնեան լինում էր վրացի կամ ռուս, նա փրփուրը բերանին գոռում էր. „տեսէք„ թէ ինչպէս են հալածւում ուղղափառ ռուսաց կայսրութեան մէջ ռուսը կամ ուղղափառ վրացին“։ Կամ ահա լսում է, թէ հայերը ուզում են այս ինչ տեղը արդիւնաբերական մի ձեռնարկ սկսել, հողեր գնել։ Պաշտօնական լրագիրը, առանց ամօթի նշանի, հրաւիրում էր իշխանութիւնը խսպառ արգելել հայերին ոևէ տեղ հող գնել, որովհետև Կովկասում հողեր պէտք է տալ միայն ռուս գաղթականներին՝ „հայերի թիւը պակասեցնելու համար“։

Կարդալով այս տողերը, դուք անշուշտ իրաւունք ունէք նկատել. „Հատ լաւ. Վելիչկօն մի հրէշ է, որ ընդունակ է ամէն տեսակ սրբութիւններ պղծելու. բայց ի՞նչ է անում կովկասեան գրաքննութիւնը, ի՞նչ է անում բարձր իշխանութիւնը, որ պարտաւոր է հսկել պաշտօնական օրգանի վրայ“։

Իրաւացի էք. այո, Կովկասում կայ ցենզուրական կոմիտէտ, և ռուսաց „Ցենզուրական կանոնագրութեան“ հինգերորդ յօդուածներից մէկն ասում է, որ խստիւ „արգելւում է գրգռել պետութեան մէջ ապրող ազգերին, թշնամացնել նրանց միմեանց դէմ՝ և առհասարակ յարուցանել ազգայնական խնդիրներ“... Ես այս բոպէիս չունեմ այդ „Կանոնագրութիւնը“ ձեռքի տակ՝ օրէնքը բառ առ բառ առաջ բերելու համար, բայց հիմնական միտքը այդ է։ Արդ ի՞նչպէս է լինում, որ այդպիսի օրէնք լինելուց յետոյ՝ գրաքննութիւնը թոյլ է տալիս այդ տեսակ գրգռիչ և վտանգաւոր գրուածքներ, այն էլ պաշտօնական օրգանի մէջ։ Գաղտնիքը հեշտ է պարզել։

Տեսնելով կամ կարծիք կազմած լինելով, որ հակահայկական ագիտացիան համակրութիւն է գտնում բարձր իշխանութեան մօտ, ցենզորները, որոնք շատ էլ օրինաւոր մարդիկ չեն—օրինաւոր մարդ ցենզոր կը դառնա՞յ,— աչքերը փակում են օրէնքի առաջ և թոյլ են տալիս այն բոլորը, ինչ որ դուր է գալիս „մեծերին“։ Այդ մէկ։ Լրտեսի դերի մէջ մտած պ. Վելիչկօ, ինչպէս ես տեղեկացել եմ վստահելի աղբիւրներից, ամէն անգամ, երբ նրա ոևէ յօդուածը ուզում էին արգելել կատաղած գազանի նման վազում էր ցենզորների մօտ և սպառնալիքներ անում, ակնարկելով, որ ինքը նրանց պաշտօնից քշել կը տայ, եթէ համարձակւեն արգելել իր „պարտքը“ կատարելու։ „Մի մոռացէք, աւելացնում էր նա, որ ես ազատ մուտք ունեմ նահանգապետի, կառավարչապետի և նոյնիսկ մինիստրի մօտ“։ Եւ վախկոտ, միմիայն իր պաշտօնի մատին մտածող ցենզորը գրոշմում էր թղթի վրայ իր թոյլտուութիւնը... Այդ երկու։ Կայ և այլ պատճառ։ Հատերին Թիֆլիզում յայտնի է, որ յա-

ճախ „Հալածական“ յօդուածների հեղինակը եղել է ոչ թէ Վելիչկո, այլ բարձր դիրք ունեցող չինովնիկներ։ Օրինակ, լուր կայ, որ միքանի անձինք, որոնք պաշտօն ունեն կառավարչապետի դիւանատանը, յօդուածներ էին գրում „Կավկազ“-ում տեղական հարցերի, գլխաւորապէս հայերի դէմ. պնդում են, որ նոյնիսկ նահանգապետի օգնական Ստեփանովիչ սիստէմատիկաբար յօդուածներ էր մատակարարում այդ լրագրին։ Եւ եթէ կառավարչապետի դիւանատան անդամները կամ նահանգապետի օգնականը և շատ ուրիշներ, որոնք կոչուած են օրէնքի գործադրութեան վրայ հսկել, իրենք ընդհակառակը „կրակի վրայ աւելի իւղ են ածում“, հետևաբար շատ բնական պիտի համարէք, որ ցենզուրական վարչութիւնն էլ իր կողմից ոչ մի արգելք չէր դնում, և, ով գիտէ՝ գուցէ երբեմն երբեմն այս և այն ցենզորն էլ իր կողմից նոյնպէս ձայնակցում էր ընդհանուր տրամադրութեան, նոյնպէս յօդուածներ էր գրում...

Այս բոլորը լաւ տեսնում, լսում և կարդում էր կովկասեան կառավարչապետ Գօլիցինը և իր համաձայնութիւնն էր տալիս — կատարեալ լռութեամբ։ Բայց լռութիւնը միայն սկզբում։ Քիչ անցած՝ նա իր այդ համաձայնութիւնը յայտնում էր պարզ, տեսանելի նշաններով, և Վելիչկո սկսեց ընդունել կառավարչապետի պալատում, հրահանգներ ու գուցէ խրախոյսներ ստանալու համար։ Այդ խրախոյսը պարզ տեսնում էր ամբողջ Կովկասը հէնց այն փաստի մէջ, որ կառավարչապետը գոհ չէր Թիֆլիսի ռուսաց, հայոց, վրաց մամուլի միւս օրգաններից, որոնք ամէնքն էլ բացի վրաց „Իվերիա“ լրագիրը, ամօթաբեր էին գտնում „Կավկազի“ բռնած դիրքը, և նոյնիսկ՝ նրանց աւելի սանձահարելու համար, Պետերբուրգից թոյլտուութիւն խնդրեց իր իրաւունքով դադարեցնելու կովկասեան լրագիրները ութ ամիս ժամանակով — մի իրաւունք, որ մինչև այդ՝ տրուած չէր ոչ մի կառավարչապետի։ Այդ իրաւունքը տարաբախտաբար տուեց Գօլիցինին, և նա շտապեց օգտուել այդ արտօնութիւնից ու դադարեցրեց 8 ամսով ռուսաց „Նովոե Աբազենիէ“ լրագիրը, արդէն դրանից առաջ ընդ միշտ դադարման ենթարկած լինելով հայոց մի լրագիր՝ „Արձագանք“ անունով...

Այս փաստերը իհարկէ աւելի լրացրին, աւելի սանձարձակ դարցրին պաշտօնական լրագրի խմբագրին։ Նա հարբեց իր աջողութեամբ և, ինչպէս միշտ, այդ հարբեցողութեան մէջ էլ գտաւ անկման խորխորատը...

Անկումը սկսւեց մի ճառով։ Իր երեքամեայ գործունէութեան առիթով պ. Վելիչկո մի հացկերոյթ կազմեց իր աշխատակիցների համար։ Անամօթ բացերեսութեամբ, բաժակը ձեռքին նա „պատմական“ խօսքեր արտասանեց. „Մեր յաջողութիւնը, պարոններ, այսօր անկասկած է։ Թէև շատ ժամանակ չէ, ինչ մենք ծառայում ենք Մայր-Ռուսաստանին, ռուսացման մեծ գործին այս վայրենի երկրում, բայց արդէն մեր ձեռք բերած զօրաւոր դիրքը զգալի պէտք է լինի ձեզնից իւրաքանչիւրի համար։ Ճշմարտութեան ձայնը, որ մեր ձայնն է, արդէն ղեկավար դեր է ստացել, և այդ ձայնն է, որ այսօր ուղղութիւն և տօն է տալիս երկրի գործերին, նոյնիսկ նրա բարձր իշխանութեան։ Տասնապատկեցէք ձեր եռանդը, որովհետև այն, ինչ ես ձեզ ասում եմ, ինքնագովութիւն չէ, այլ իրողութիւն“...

Այս խօսքերը հասան կառավարչապետի պալատը։ Գօլիցինը ցնցւեց. „Ինչպէ՞ս. ինքը գեներալ-ադիւտանտ, սենատոր Գօլիցին, Գօլիցինների տոհմի զօրեղ ներկայացուցիչը, փոխարքայական պաշտօն վարող ադմինիստրատորը՝ ղեկավարի՞ մի ինչ որ աննշան „չինովնիկից“, որի խմբագիր լինելն էլ իւր մի խօսքից է կախուած“... Այդ օրից շատ բան փոխւեց։ Նախկին ժպիտներին յաջորդեցին դաժան հայեացքներ, „գեներալական“ բացականչութիւններ, և դռները գոցւեցին փայփայուած ռուսացնողի առաջ։ Սակայն „ռուսացման մարգարէն“ էլ լուռ չմնաց։ Նա սկսեց տրտնջալ, ակնարկներ անել, փսփսալ, բացատրութիւններ պահանջել...

Եւ ահա նոյն այդ միջոցին, մի օր, երբ կառավարչապետի շքեղ ապարանքում ճոխ պարահանդէս էր կազմուած, պ. Վելիչկոյի գլխի մէջ միտք յղացաւ, որ այդ պարահանդէսին չպիտի հրաւիրուի և ոչ մի հայ, իբրև հրապարակական դատավճիռ հայերի գլխին։ Սակայն պ. Վելիչկոյի գլխում յղացած այդ „քաղաքական միտքը“, հակառակ նախկին դէպքերին, այս անգամ արձագանք չգտաւ փոխարքայական ապարանքի տիրոջ գլխում.—ընդհակառակը՝ հրաւիրուածների թւումն էր մի միլիոնատէր, որը թէև հայ, բայց ամէն տարի առատօրէն հազարներ է տալիս բուն ռուսական հիմնարկութիւններին։ Բաժակը լեցուեց։ Այդ արդէն անկարելի էր տանել, որովհետև դա ուղղակի վիրաւորանք էր, ուղղուած Վելիչկոյին, ուրեմն և... ամբողջ ուղղափառ Ռուսաստանին։ „Վրէ՞ժ, վրէ՞ժ,“ գոչեց պ. Վելիչկո, և յաջորդ օրն իսկ, իր մի յօդուածում, թէև ակնարկի ձևով, փորձեց խայթել իշխան Գօլիցինին։ Խօսելով ոսկու ուժի մասին, իմիջի այլոց նա յիշատակեց այն „յիմար ձուկը“, որ զոհ է գնում „ոսկէ կարթին“... Ակնարկը հասկացուեց. պալատական վհուկները ակնարկի վրայ „իւղ աւելացրին“, և մի շաբաթ իսկ չ՛անցած՝ կատաղութիւնից կաս-կարմիր կորած կառավարչապետը հրահանգեց՝ „24 ժամւայ մէջ հեռացնել Վելիչկոյին պաշտօնից և Կովկասի սահմաններից“...

Դրանով էլ վերջացաւ առաջին գործողութիւնը այն „քաղաքական շանտաժի“, որ երեք տարուց իվեր խաղացւում էր Կովկասում, պաշտօնական լրագրի խմբագրատան շուրջը։ Լրագիրը այժմ յանձնուած է մի „անվնաս“ չինովնիկի, Տերենկով անունով, որ խաղաղ կերպով իր գործը կը տանի, մինչև որ մի օր, նոր քամիների ազդեցութեան տակ, դարձեալ կարիք կըզգայի գործի գլուխ կանգնեցնել մի նոր Վելիչկո — նմաններ շատ կան Ռուսաստանում։ Այդ կարող է պատահել շատ հեշտութեամբ, և հէնց այդ պատճառով է, որ ինձ հարկադրուած համարեցի այսքան երկար կանգ առնել մի այնպիսի „զզուելի արարածի“ վրայ, ինչպիսին է այժմ Պետերբուրգ, իր բարեկամների գիրկը ապաստանած պ. Վելիչկո, որպէսզի դուք փոքրիշատէ պարզ գաղափար կազմէք այն տիպի մասին, որ ստեղծուել է ռուսաց մամուլի մէջ՝ ազգայնական հողի վրայ...

Մի վշտանաք, խնդրում եմ, եթէ մի քիչ երկար դուրս եկաւ իմ նամակը, և թոյլ տուէք, նախ քան վերջացնելը, մի փոքրիկ հարց էլ պարզել։ Այդ հարցը կարող էք տալ դուք ինքներդ, առանց ինձ սպասելու։ Դուք կարող էք իրաւամբ հարցնել. „Այդ ինչպէս եղաւ, որ պ. Վելիչկոյին համբերում, տանում էին, նոյնիսկ փաղաքշում, հովանաւորում էին, նրա սրտին դիպչել չէին ուզում, երբ ամբողջ երեք տարի հրապարակով

այն էլ պաշտօնական օրգանում, խոցոտում էր մի ամբողջ ազգի սիրտ, թոյլ տալով իրեն ամենալիրբ զրպարտութիւններ, հալածանքներ, մատնութիւններ և բացարձակ դաւեր,—բայց հէնց որ նա լոկ մի ակնարկի ձևով խայթեց կառավարչապետին, իսկոյն դարձաւ անտանելի, վնասակար և արժանի „24 ժամւայ մէջ“ քշւելու երկրի սահմաններից:

Շատ տեղին է հարցը, ինչպէս և պարզ պատասխանը: Պատճառը այն է, որ բիւրօկրատիական Ռուսաստանում ոչինչ, համարեա ոչինչ չ'արժէ „հպատակը“, ինչպէս և այդ հպատակների ամբողջ խումբը, լինի այդ մի համայնք, մի դասակարգ թէ մի ամբողջ ազգ: Բայց այլ բան է, երբ խօսում էք այդ „հպատակների“ տէրերի մասին,—լինի դա ուրեադնիկ, գաւառապետ, նահանգապետ, կառավարչապետ թէ մինիստր: Կարելի է անպատիժ կերպով զրպարտել և հալածել ամբողջ գիւղեր, եթէ ուրեադնիկը այդպէս է կամենում. մի ամբողջ գաւառ, եթէ գաւառապետը այդպէս է թելադրում. մի ամբողջ նահանգ, եթէ այդ օգտակար է նահանգապետի կարծիքով, և ամբողջ նահանգներ, եթէ կառավարչապետը կամ մինիստրը այդ համարում են նպատակայարմար: Բիւրօկրատիան ունի իր սեփական օրէնքը—թէև ոչ գրաւոր,—որը դաւանում է հետևեալ սկզբունքը. ուրեադնիկը արժէ ամբողջ գիւղ, գաւառապետը՝ ամբողջ գաւառ, նահանգապետը՝ ամբողջ նահանգ, կառավարչապետը՝ բազմաթիւ նահանգներ, մինիստրը՝ պետական ամբողջ արդարութիւն, իսկ կայսրը... ամբողջ պետութիւնը...

Ահա այդ է ձեր հարցի պատասխանը:

Եզրակացութիւնը դուրս բերէք ինքներդ:

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԹԻՐԵԱՔԵԱՆ

(ՎԱՀԱՆ)

Մ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

Խաստուրի կռւում նահատակւած տասնապետ Միհրան Թիրեաքեանը ծնւել է 1871 թւի փետրվարի 2-ին Կեսարիայի Տէրէվանք գիւղում: Զնայելով գիւղում ստացած չնչին ուսման, իր եռանդով և աշխատութեամբ բաւական յառաջադիմեց, այնպէս որ ընկերները միշտ օգտւում էին նրա խորհուրդներից: Ինքնաշխատութեամբ ձեռք բերած իր զարգացման հետ՝ նա լաւ արհեստ ևս ունէր՝ ատաղձագործ էր:

Թիրեաքեանը յեղափոխական գաղափարին յարեց Պօլսի մէջ 1888 թւին: Երբ առաջին փորձ, նա մասնակցեց Բաբ-Ալիի ցոյցին և երբ անկարելի եղաւ Պոլիս մնալը, անցաւ արտասահման: Սակայն, հազիւ այստեղ մի փոքր հանգիստ առած՝ արտասահմանի Կօմիտէն նրան ուղարկեց Պարսկաստան: Պարսկաստանից Թիրեաքեանը խմբով Վան անցաւ և կռւեց Վազգէնի խմբի հետ միասին: Սուլթանի թնդանօթի ռումբերը չվհատեցրին նրան: Ազատւելով ահռելի կռւից, նա վերադարձաւ Պարսկաստան և ապա Ռուսաստան, ուր մի ամբողջ տարի իր արհեստով պարապեց և իր աշխատանքով մի քանի ընկերներին ևս չթողեց, որ կազմակերպութեան բեռ լինեն:

Երբեք նա հանգիստ չ'ունէր. շարունակ կռիւներ էր երազում: Նա անդառնալի կերպով համոզւած էր թէ իր դժբախտ հայրենիքի փրկութեան միակ միջոցը՝ յեղափոխական ուժը, զէնքը, կռիւն է: Ուստի առանձին յափշտակութեամբ և սիրով մասնակցեց Խաստուրի զինատար խմբին մի տասնեակի գլուխ անցած:

Այս անգամ Թիրաքեանը կարծես նախազգում էր իր մահը. երբ խումբը հեռանում էր սահմանից, նա գրեց իր սենեակի դրան վրայ հետևեալը.

Ես սիրում եմ երկիրն հայրենի,
Բայց հանգիստ չկայ, բոյնս է փշալի:
Քանի՜ տանջւեմ ես այդ ցաւերով...
Մահս ցանկացած, զալիս եմ զէնքով
Զարկել զարկւել քո սիրուդ համար...:

Կռւի դաշտում նա նախայարձակների շարքումն էր: Պատերազմի տաք միջոցին, հերոսը կռւում էր աներկիւղ դիրքեր գրաւելու համար: Դժբախտաբար թշնամու գնդակների տարափի տակ ընկաւ քաջարի յեղափոխականը, թողնելով իր անմոռաց յիշատակը և անձնւիրութեան փայլուն օրինակը իր բոլոր ընկերների սրտում:

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ

(ԿԱՐԱՊԵՏ ՊԻԼԷՋԻԿՃԻ)

—

Silence and secrecy

CARLYLE

Պարագաներու բերումով ուշ մնաց «Դաշնակցութեան» կողմէ վաղամեռ հայրենասէրի յիշատակին նուիրուած յարգանքը: Այդ յիշատակը, թէեւ կարճատեւ, սակայն միշտ կը պահէ իր անթառամ այժմէութիւնը:

Տիգրան Երկաթ հայ հասարակութեան քիչ ծանօթ է. այն ամօթխած ծաղիկներուն պէս էր, որոնք բուրումներով կը լեցնեն ձորերը ու ծործորները եւ իրենք լուռ ու թաքուն կը մնան: Քրմական թերասուրի մը մէջ նուիրականօրէն առանձնացած, իր փխրուն ու թափանցիկ մարմնի մէջէն, դառն կսկիծով ու մարմնչող սրտմտութիւնով կը հետեւէր հայրենի աշխարհի մէջ կատարուած ահաւոր ոճիրին, արտակարգ ճակատագրի մը խաղերուն եւ կոյր քմահաճոյքներուն:

Այդ աղուոր կեանքին անհետացումը զգալի կորուստ մըն է:

Երբ հալածանքէն վտարանդի ինքզինք նետեց Յունաստանի հողին վրայ, Աթէնքի մէջ Հայաստանի տառապանքներուն առաքեալը եղաւ: Ինքնահաւան հելլէններուն լսել ու սիրցնել տուաւ ինքզինք: Աւելի երջանիկ քան Պօղոս առաքեալը, չհանդիպեցաւ Ակօռայի սկեպտիկ եւ հակաճառող ձայներուն որոնք նոր բան լսելու միայն սիրահար էին: Բանախօսեց անոնց, հին հռետորներուն պէս կանաչ ճիւղերու փոխարէն, ազգի մը մարտիրոսութեան ու հերոսութեան պսակը ունէր: Յունաստանը ասպնջականեց հայ փախստականները եւ պահ մը մոռցնել տուաւ Ստորին Կայսրութեան հարուածներու վարմունքը:

Իբր խօսքի ու գրչի գինուոր գործեց հոն։ Պարբերաբար գրեց Revue des Revues-ին մէջ հայոց ազգը եւ գրականութիւնը ճանչցնող կարգ մը շահեկան յօդուածներ (եռաստղ կամ Տ. Երկաթ ստորագրութիւնով) տաք զգացումով եւ անկեղծ ներշնչումով խմորուած։

Այդ կարգի անհատներ, թէեւ կուսակցութեան չեն պատկանիր, բայց յեղափոխութեան ուժեղ գիտակցութիւնը ունին։

Յունաստանի պատերազմին ատեն աշխատեցաւ „Հէթերիա Էթնիքա" ազգային ընկերութեան (որուն ինք անդամ էր) եւ „Դաշնակցութեան" միջեւ կապ հաստատել Արեւելքի մէջ միասին գործունէութեան մը համար։ „Դաշնակցութիւն"ը յոյն ընկերութեան ներկայացուցած էր իբր գ ո ր ծ ի կ օ մ ի տ է եւ շատ անգամ գրաւոր („Միութիւն" լրագրի մէջ) եւ բերանացի կրկնած էր՝ „ամէն ոք պէտք է օգնէ յեղափոխականներուն։ Ես ոչ մի կուսակցութեան չեմ պատկանիր, բայց իմ չնչին լումաս „Դաշնակցութեան" գանձանակը կը սիրէի ձգել"։

„Դաշնակցութեան" ուղարկած իր համակրական նամակներուն *) մէջ, որոնք անկեղծութեան եւ ճշմարիտ հայրենասէրի փայլը ունին, կը գրէ.

«Ապակեդրոնացումը լաւ դրութիւն է։ „Հէթէրիան", իր վերջի նիստերէն մէկուն մէջ անյաջողութեան մէկ մասը կեդրոնացումի կազմակերպութեան վերագրեց եւ որոշեց ապագային հակառակ հիման վրայ գործել (կրնաք ձեր թերթին մէջ կրկնել)։ Կարծեմ, սակայն, ապակեդրոնացումը շատ ծայրայեղցուցած էք դուք»...

„Դաշնակցութեան" խորհուրդ կուտայ աւելի այլաբանական եւ ամէն ազգի հերոսներու պատկերներով պրօպականտա ընել եւ ազդել ժողովրդի երեւակայութեան վրայ. կը յանձնարարէ նաեւ հայոց կոտորածներու տեսարանները լուսանկարել եւ ցրուել Եւրոպայի մէջ։ Ինք կ'առաջարկէ մեզի այլաբանական նկարի մը յատակագիծը, որը կը ներկայացնենք մեր հասարակութեան եւ արտիստներուն իբր կտակուխտը հայրենասէր երիտասարդին։

„Հայկական դաշտանկարի մը մէջ, Վարդան գերեզմանէն դուրս կ'ելլէ պատերազմական տարազով. հեռուն ձիաւորներ սպաննուած թիւրքերու մէջ. ներքեւը սա բացատրութիւնը.

Վ ա ր դ ա ն. — Հերոսական ձայներ կը լսեմ, ընկերնե՞րս են որ զիս գերեզմանէս կը վերակոչեն։

Ֆ է դ ա յ ի ն ե ր. — Մենք ֆէդայիներն ենք։

Վ ա ր դ ա ն. — Ձեզի հետ աշխարհքին ծայր ըլլայ՝ կ'երթամ»։

Տիգրան Երկաթի մէջ, իբր մարմնացած բողոք, կար յեղափոխութեան փոթորիկը, պաշտումը դիւցազնագործութիւններու, քնքուշ հոգիով մը շրջանակուած։ Մե՜ղք, որ վայրագ հիւանդութիւն մը, թոքախտը, քայքայեց այդ համակրելի եւ պատուական կեանքը։

Վերջի օրերուն արտասահմանէն փոխադրեցին Պօլիս, իր ծնողաց կարօտը առնելու համար։

„Մեռելոց աշխարհին" մէջ, որ կը կոչուի Թիւրքիա, մահուան թեւերուն տակ, գերագոյն սարսուռով մը եւ համադրական վրէժի թափով մը գրեց իր վերջին լուրջ ուսումնասիրութիւնը (Revue de Paris-ին մէջ լոյս տեսած) „Թիւրքիան կրնա՞յ ապրիլ" վերնագրով։

Ինչքան Թիւրքիոյ դէմ ջղուտ եւ կորովի ատելութիւնով մը լեցուած հայրենասէրի մը երկունքը ըլլայ այդ գրուածը, անուրանալի է որ իմաստասիրական հմտութիւնով ու խղճմտանքով աշխատասիրուած վերջին ահաւոր դատաստան մըն է. հոն վեր կը հանէ Թիւրքիան որ իր կշտերուն մէջ կը կրէ մահուան սերմը։

Ճակատագրական մեծ հարցանիշ մը դնելէ եւ իր երիտասարդ հոգիի մարգարէութիւնը ու արհամարհանքը նետելէ յետոյ սուլթաններու կայսրութեան արիւնաճակտին, այդ ազազուն այլ խ ո հ ո ւ ն ե ղ է գ ը, մարեցաւ 29 տարեկան կորիճ հասակին մէջ, երեւոյթեան այն աստղին պէս որ քանի հորիզոնին կը մօտենայ՝ այնքան աւելի կը պայծառափայլի։

*) Այդ նամակները գրուած են Աթէնքէն, 15 մայիս եւ 20 հոկտեմբեր 1897 թւին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

ԱՐՇԻԼՔԸ. — Պիքընսֆիլդ կ'ըսէր թէ, Ասիան այնքան լայն է որ բոլոր եւրօպական պետութիւններուն կը բաւէ։ Վհուկ ըլլալու հարկ չկայ գուշակելու համար թէ Ասիան Ռուսաստանի հազիւ պիտի բաւէ։

Անգլիան հարաւային Ափրիկէի մէջ անարդար կռիւ բռնած է. անակնկալներով, յուսախաբութիւններով եւ դժբախտութիւններով լեցուն տռամ մը. մարգարէ էր սպանիացի այն վեհապետը՝ որ Բարեյուսոյ Գլուխը - Դ ժ բ ա խ տ ո ւ թ ե ա ն գ ը լ ո ւ խ անուանած էր նախապէս։ „Մարդասէր" Մեծն Բրիտանիան ո՛ր չարաստանայէն փորձեցաւ ա զ ա տ ո ւ թ ե ա ն դէմ զինուելու։ Արդեօք այն բարձր աստղին ցածնումն է, որուն լծած էին Անգլիան Կլադստոնի պէս հոյակապ եւ մարդասէր անձնաւորութիւններ, կամ այն խորհրդանշանող օձը, որ իր պոչը կը խածնէ։ Ալպիոնի մառախլոտ Splein-էն դժգոհ ճէնթլմէնները կ'երթան Թրանսվալի ձորերուն ու կիրճերուն մէջ, բօպճէներուն ստորոտը, իրենց հերոսի գերեզմաններ պատրաստել։

Անգլիոյ պատմութեան մէջ էն անխոհեմ քայլը, որուն ելքը չէ կարելի նախատեսել, ուժաթափ պիտի ընէ զինքը երկար ատեն։ Միջազգային շփոթութիւններէն, առանց պուտ մը արիւն թափելու, իր առիւծի բաժինը ստացող Անգլիոյ այսօր նոյն խաղը կը խաղան ուրիշ պետութիւնները։ Այդ խորունկ կսկիծին մէջ, անգլիական տարապայման զոռոզութիւնը վեհափառ արհամարհանքով մը կ'ուզէ նայիլ իրեն շուրջը անցած դարձածներուն վրայ։ Բայց իզո՜ւր։

Ասիոյ վարագոյրը կամաց կամաց կը բացուի. Ռուսիա բեմին վրայ է աքիլեան սպառազինութիւնով. Անգլիոյ ասիական շահերը վտանգի մէջ են. իր թշնամիները ամէն կողմէ թակարդներ կը լարեն. Անգլիան, սարսուռ մը կըզգայ իր հսկայածաւալ մարմնոյն մէջէն, որուն վրայ մարը չմտնող արեւը հազիւ կը տաքցնէ զայն։

Ջէնքի բախտը այնքան ժպտուն չէ իրեն համար, եւ արդէն սկսած է անդրադառնալ իր առած տխմար քայլին վրայ, որ սկովդիական fey-ին պէս կը մղէ զինքը անխուսափելի մեծաղէտի մը։ Ներսէն, այդ խորթ մայրը աւելի վեհանձն քաղաքականութիւն մը կ'ուզէ գործադրել Իրլանդայի հանդէպ, որուն պատմութիւնը մարտիրոսութիւն մըն է, սրտաճմլիկ եւ ահարկու։ Թրանսվալի պատերազմը, ուր Իրլանդայի դժբախտ եւ անմիտ զաւակները այնքան հերոսութիւն ցոյց տուին անգլիական դրօշին տակ, իրենց պէս չարաբախտ ազգի մը դէմ — կոյր ճակատագրի հեգնութիւններ — անգլիական դիւանագիտութիւնը մարդասիրական կեղծ դրութեան մը մէջ դրաւ Իրլանդայի նկատմամբ. վախնալով ներքին քաղաքային յեղափոխութենէ, որ կրնար պայթիլ այդ մարտիրոս ժողովուրդին մէջ, եւ միանգամայն Իրլանդայի զինուորներուն անյիշաչար անձնուիրութենէն օգտուելով, Անգլիոյ թագուհին հանդիսաւոր այցելութիւնով մը ուզեց պատուել եւ փայփայել Իրլանդայի ազգային զգացումը եւ անձնասիրութիւնը, ս. Պատրիկի, ազգային պաշտպան սուրբի տօնին մասնակցելով։ Արիւնաթաթախ Իրլանդան այնքան տառապանքներէ ետքը, իր մեռելային այտերուն վրայ կ'ընդունի

The first kiss of love.

ցուրտ համբոյրը պառաւ թագուհիին։

Իրլանդա, խեղճ Սանդրիյօն, որքան մոռացկոտ ես՝ քու թացթաց վէրքերուդ մէջ, նենգամիտ Ալպիոնին նկատմամբ։

* * *

Ռուսիա, իր պատմական անհաշտ թշնամիին, Անգլիոյ այլուր զբաղումով, ձեռքերը ազատ կըզգայ Ասիան չափել ձեւելու։

Այս պահուս ծայրագոյն Արեւելքի, Կեդրոնական Ասիոյ, Պարսկաստանի եւ Թիւրքիոյ մէջ Ռուսիան մեծ դերակատարն է. միակ անպատեհութիւնը, որ իր մէջքը կը թուլցնէ, իր նիզակակիցին, Ֆրանսայի, ցուցահանդէսով զբաղած ըլլալն է։

Ամէն պարագայի մէջ սուսիկ-փուսիկ, մեռելածակոցի մը պէս, Պարսկաստանի վրայ նետեց իր թեւհովանաւորութիւնը եւ զայն լռելեայն ռուսական բ ր ա վ ի ն ց ի ա մը ըրաւ։ Պարսից Շահը քանի մը տարի առաջ 500 կազակ թիկնապահ ունէր. այսօր 1500

եղած է այդ „անմահից գունդը“ [եւ տարեկան անօթի ծարաւ Պարսկաստանը 500,000 ռուբլի կը վճարէ անոնց օրը օրին, երբ բուն երկրին սպանները անօթի կը] յօրանջեն: Շիր [խուրշիտը, երկրին թելքսմը, կը նսեմանայ ռուսական արծւին առջեւ, զի „Արեաց աշխարհը“ շատոնց մոռցած է բարեկարգ աշխարհավարութիւնը Աքիմենեանց հարստութեան, երբ „արքայից]արքային“ „աչքերը ու ականջները“ Ընջօրէն կը հսկէին լայնածաւալ կայսրութեան մը ամէն մէկ անկիւնը:

Զրադաշտի „Ճշմարտախօս“ պարսիկները, որոնք երբեմն „բարին“ կը հետապնդէին, այսօր խառնուած „տաներանններու“ հետ, զգայապաշտ մոլութեան գերի, մոլեռանդութեան կուշտուկուռ մթնոլորդին մէջ, ստախօսութեան, կեղծաւորութեան, կաշառակերութեան ու տգիտութեան մէջ անդամալոյծ կը փրտին: Ռուսդէմի հեքեաթները եւ Կիւլիստանի վարդ-սոխակի, նոճիներու ու հուրիներու երազանքները միայն Կ'ուտան իրեն հեշտանքի գինովութիւնը. ազգային զգացումի ոչ մի գեղեցիկ ժէստ, ոչ մի զայրոյթ եւ սրտմտութիւն ցոյց Կ'ուտայ այդ երբեմնի խելացի ամբոխը. քարոյական անապատ մը եղած է, Սէյիստանի „յուսահատութեան անապատ“-ին պէս: Զանծրանալի անամնայնի համակերպութեան մը մէջ մոմիացած, յոռետես, զրկուած ըլլալով հոգիի քարոզ [ներշնչումէ եւ կորովէ, աշխարհի շորս ծայրերէն եկող ամէն քամիի պատբաստ է գլուխ ծռել, մոլեռմոխիր դարձած, այլասեռուած այդ ժողովուրդը, որուն մէջ այլեւս եւի չիգար Կիւրոսի գինուորներուն հպարտ արիւնը:

Թեհրանի կառավարութիւնը վերջնապէս եւ ճակատագրապէս կը նետէ ինքզինք իր դրացիին գիրկը. անոպայ Փարաշներուն կը յաջորդեն մարզուած կազակներ: Անգլիական ազդեցութիւնը հետզհետէ, աներեւոյթ պայքարէ մը ետք, տեղի կուտայ եւ կը քաշուի ծովեզերքները ծովի անհունութեան մօտ, ուր „իր արտին դառնութիւնը“ կը մոռնայ:

Պարսիկ կառավարութիւնը որքա՜ն պէտք ունէր այսօր, պարթեւական նետի մը:

Այս տխուր եւ ցաւագին հոգեւարքի տոամին հանդիսատես են Պեհեստունի մեծափառ արձանագրութիւնները, ուր Դարեհի ըստուերը դեռ կը թափառի Որմիզդի սաւառնումներուն տակ:

Ռուսական արծիւը կրսկսի թեւերը առնել Տէմավէնդի գագաթը, ինչպէս անգղները Փարսիներու „լռութեան աշտարակին“ վրայ:

Որքա՜ն բարեբախտ էր հին Իրանը, երբ ատրուշանները կը վառէին Զենդ-Ավեստայի] աղօթքներով բոցաթեւ:

* * *

Պարսկաստանի մէջ անծայն, անշշուկ տեղաւորուելէ ետքը, Ռուսիա, համը բերանը մնացած, իր թաթերը երկնցուց օսմանեան պետութեան որ, ինչպէս Կ'ըսեն, ցարդ եւրոպական պետութիւնները ծովը կը տանէր, ցամաք կը բերէր: Սուլթան Համիդ միայն՝ որուն օրով Թիւրքիան բարոյապէս եւ նիւթապէս [էն ինկած վիճակը ունի, կը հիանար ինք իր [վարած կնատ քաղաքականութեան վրայ: Համիդի մասին կարելի է լեցնել հատորներ սա տիտղոսով. „ի՞նչպէս կը կործանեն կայսրութիւն մը“:

Տասը տարի է, այդ ոճիրներով դժբախտ մարդը, Կ'ուզէ աւելի իր երկիրը քրիստոնեայ տարբերէն. Գուրանի սուրաթներէն աւելի նա երեւի կը հաւատայ իր սեփական թէօրիին, թէ վեհապետի մը իրաւունքն է „պետական ապահովութեան“ անունով ջարդել, կոտորել այն տարրերը, որոնք ոչ պետական կրօնը ունին եւ ոչ պետական լեզուն:

Այդ կարգի վեհապետներ ծնան մասնաւորապէս հոռմէական կայսրութեան վերջի օրերուն, երբ թագուհիները իրենց արգանդի պտուղը անառականոցներու մէջ կը վաստկէին: Ի՞նչ որ ալ ըսի անօգուտ է, որովհետեւ կը զտնուինք էն զգալի անբարոյականութեան մը դիմաց, որուն հայհոյանքով ու նեղանալով չէ կարելի պատասխանել. այլ... գործով:

Սուլթան Համիդ, որ ոչ մէկ առաքինութիւն չունի, բնութիւնէն աւելի օժտուած Կ'ներեւի ուրիշ յատկութիւններու քան վեհապետի թուրը [կապելու:

Հայաստանը ամայաւեր ընելով, ռուսական սահմանակից երկիրները խոպան եւ աւերակ պահելով, Կ'ուզէր հեռացնել Ռուսիոյ ազահութիւնը: Այսօր այդ վտանգը, իր անաւոր ծանրութիւնով, կուգայ ցնցել խալիֆայի մնացող ուղեղը:

„Սրբազան“ Ռուսիան ամեն անգամ երբ ուզէ սուլթանի դեւերը ժողվել, իսկոյն կը շահագործէ Կովկասի հայ գաղթականներուն թշառութիւնը: Համիդ՝ էն վերջը մինչեւ իսկ կնիկները ծախելու տրամադիր [էր, հերիք էր որ հայերը իրենց տները տեղերը չի վերադառնային: Խալիֆային համար անկարելի է քանի որ Մեծ „Մարդասպան տիտղոսին հետ խնունջի պէս իր ճակատագիրն ալ հետը կը կրէ... երկու եղջիւր:

Երանի՛ քեզի, Թիւրքիա:

Հայկական դժբախտութիւնները Թիւրքիան հասցուցին այսօրին եւ կը հասցնեն ինչալլահ աւելի թշուառ օրին: Ընէկլիէն — ուրկէ Պոլսոյ էզանները կը լուին — մինչեւ Ընզրում, Համիդի տնաքանդ իրաղէտով մը Ռուսիա դիւանագիտական „քնացող իրաւունք“-ը մը կըստեղծէ իրեն համար ամբողջ Սեւ ծովու աւազանին մէջ: Սուլթանի պէս վիշապ մը կամ դազի մը հերցաւ պաշտպանել „ոսկեգեղմը“, հիւսիսի Ցանոսին դէմ:

Զարխը Ֆէլէքն է որ կը դառնայ: Իզո՛ւր նախարարաց խորհուրդը, ազգասիրական սուտ զայրոյթներ Կ'ունենայ, երբ... „Ամենիրալ Հոռմի դռներուն առջեւն“ է. իսկ արդարութեան նախարարը իր գրիչը կոտրելու տեղ, մազապաթան չստորագրելու համար, կընար Ներլոզգի դրանը վրայ, իբր նոր Դրոմվէլ գրել. „Թիւրքիան, ծախու տուն“:

Մեծն Կատարինէի օրով Բեռլուրկի յաղթական կամարներուն վրայ „Բիւզանդիոնի ճամբան“ Կ'արձանագրէին. այսօր կարելի է ըսել այդ ճամբան բաց է շնորհիւ Համիդի, եւ արդէն Լերմոնտովի մեծափառ Քազվէքը Կ'ողջունէ Պոնտոսի Ալպեանները... Վոսփորը...

Հարէմ Թիւրքիան պէտք ունի Ռուսիոյ պէս „արջ սիրահար“-ի մը զգւանքներուն՝ ամառ զիշերուան մը ակամայ եւ ցաւագին երազներուն մէջ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Աթէնքում հրատարակւող „Միութիւն“ թերթը իր 37 համարում „Խառն Ժողով“ վերնագրով մի յօդուածում, շեշտելով համերաշխութեան բացակայութիւնը հայ յեղափոխականների մէջ, ինչպէս նաև դրանից առաջ եկող վնասները, առաջարկում է.

„Մեր այս բոլոր թերութիւնները բառնալու, ազգ. գործերն իրենց հարթ ուղիին մէջ դնելու և կուսակցական երկպառակութեանց մի անգամէն վերջ տալու միակ միջոցն է 1900 թուականին մայիս ամսուն մէջ Ազգ. խառն ժողովմը գումարել ի Բարիզ, ընդ նախագահութեամբ Տիար Մ. Զերազի և անդամակցութեամբ մի քանի նշանաւոր էջզոր անձնաւորութեանց“:

Այս առիթով պ. Մ. Զերազը իր L'Arménie թերթի 136 համարում (փետրուար)՝ յայտնում է.

„Միութիւնը“ առաջարկում է մայիս ամսին գումարել հայերի մի ժողով Փարիզում՝ մեր անօրէնի նախագահութեամբ: „Արմենիա“, „Հնչակ“, „Դրօշակ“ և „Մարտ“ անունով իրենց թերթերը ունեցող կուսակցութիւնները, եթէ հաւատում են այս առաջարկի օգտաւէտութեան, թող յայտնեն Փարիզում գտնուող իրենց կուսակիցներից նրա անունը, որին կամենում են յանձնել ժողովին մասնակցելու պաշտօնը, որպէսզի մենք սկսենք նախապատրաստական բանակցութիւնները“:

Մեր կողմից յայտնում ենք, որ պ. Մինաս Զերազը անձամբ ծանօթ է „Դրօշակ“-ի խմբագրութեան Փարիզի ներկայացուցչի հետ և որ վերջինիս միջոցով նա կարող է տեղեկանալ մեր հայեացքներին ներկայ խնդրի վերաբերմամբ:

* * *

Մարտի 1-ից Ժընէվում սկսեց հրատարակւել, ֆրանսերէն լեզուով, երկուշաբաթեայ յեղափոխական մի նոր լրագիր, L'Effort անունով: Լրագիրը, որ Մակեդոնական Բարձր Կոմիտէի արտասահմանեան օրգան կարող է համարուել, նպատակ ունի մի կողմից ծանօ-

թացնել եւրոպական հասարակութիւնը մակեդոնական ժողովրդի կենսական պահանջներին և միս կողմից՝ դիմադրել յունական, սերբական և բուլգարական՝ այն բոլոր շովինիստներին, որոնք „ազգասիրութիւն“ են համարում, շատ անգամ նոյնիսկ անվայել միջոցներով, ինտրիգներ լարել մակեդոնական շարժման դէմ, ձգտելով պատմական այդ նշանաւոր երկիրը պատառ-պատառ անել կամ ամբողջապէս միացնել իրենց երկիրներին։ Մակեդոնական ինքնավարութիւն — ահա L'Effort-ի նշանաբանը, որին, ինչպէս երևում է մինչ այժմ լոյս տեսած համարներից, նա կը ծառայի անշուշտ յեղափոխական յայտնի մի կուսակցութեան վայել տոկունութեամբ և աւիւնով։

ՄԱՀԻԱՆ ՊԱՏԻԺ

„Վրէժ“-ի Կեդրոնական Կոմիտէի վճռով՝ 1900 թ-ի յունուարի 3-ին, ժամը 6-ին երեկոյեան, Խոյ քաղաքի պարսից թաղի մէջ, տեռորիստի խանչալի մի քանի հարուածներով մահուան ենթարկուեց նախկին յեղափոխական, Հին-Նախիջևանի Զահրա գիւղացի, ՏԻԳՐԱՆ ՑԱՐՈՒԹԻՆԵԱՆԸ, որ ամուսնացած էր Սալմաստում։

1896 թ-ից Սալմաստում, զէնքի փոխադրութեամբ զբաղուելով, նա որոշ հաւատ է ձեռք բերում „Վրէժ“-ի Կետրոնական Կոմիտէի շրջանում, բայց 1898-1899 թուականներին նա իշխան է գործ դնում այդ հաւատը ծախելով և գրաւդնելով կազմակերպութեան միքանի հրացանները։ Այնուհետև՝ երբ 1899-ին Կոմիտէն նրանից հաշիւ է պահանջում, նա Սալմաստից Խոյ է փոխադրւում և այնտեղ մի ազդեցիկ պարսկի „ռայեաթ“ գրելով, սպառնում է իրեն ծանօթ և Խոյից անցուդարձ անող յեղափոխականներին մատնել կառավարութեան ձեռքը, եթէ չդադարեն ոևէ պահանջներ իրեն անելուց։

ՆԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Այգեստանից՝ 200 ռուբլի, „Վիշտ“ աշակերտական երկու խմբերից 60, երկու տիկնայք 25 ռուբլի։ Գումար 285 ռուբլի։

ՎԻՇԱՊԻ „ՄԱՀ“ ԿՈՄԻՏԷՆ՝

Ատրճանակ 60 դահեկան, Կոպիտ 5, Ատրճանակ 60, Մօսին 18, Կախաղան 4 դահ. Գումար 147 դահեկան։

ՍԵՊՈՒՀԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷՆ՝

Ծերունու ծեռամբ 108. 75 եւ 515 ղուրուշ, „Օժանդակ“ խմբէն՝ 103 եւ 103 ղուրուշ, „Ազատ“ խմբէն՝ 103, Արշալոյս 10, Վրոյր 19, „Օժանդակ“ խմբէն կրկին Վ. Ց. 206 ղուրուշ։ Ընդամէնը 1167. 75 ղուրուշ։

ՏԱՊԱՐ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷՆ՝

Հրաչ (հոկտ. նոյեմբ. դեկտ. յունվ.) 40-ական դահեկան, Հրաչէն նուէր 20, Հրաչ-Հարիկ 20, Նարեկացի (հոկտ. նոյեմբ. դեկտ. յունվ.) 40-ական, Մ. Մ. 540, Սուրբ-Զատիկ 108, Մ. Պ. 54, Քրմապետ 54, Քրվէժ շրջանէն 20, Շփոթ շրջանէն Մ. 5, Պերճ 5 ամսական (յուլիսէ-նոյեմբեր) 5 դահեկան։ Գումար 1146 դահեկան։

ԱԼԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԿՈՄԻՏԷՆ՝

Դանձանակէ 29 դահեկան ողջ, „Միութիւնը փրկութիւն է“, Ս. Խանէն, Անյայտէն, Հին Էմէկտարէն, Հին Էմէկտարի ընկերէն 20-ական, „Բուրգ“ խմբէն 140, „Տիգրան“ խ. 84, „Եգիպտացի“ խ. 106. 50, „Թաթուլ“ խ. 100, Թորգոմ 15, Ցոլակէն (յունվ.-հոկտ.) 100, Ազիզէն 97. 50, Մեղու (յունվ.-դեկտ.) 360, Մեղուից նուէր 195, Զինանշաններէն 197 դահեկան։ Գումար 1524 դահեկան ողջ։

ՆԱԻԱՀԱՆԳՍՏԻ ԿՈՄԻՏԷՆ՝

ԱՄԱՌԱՆՈՑԻ „Մահ“ խմբի ամսավճարներից՝ 50 ռուբլի, ԿԼՈՐԻԿԻ „Լեռնամէջ“ խ. 9 ռուբլի, „Արթուն“ խմբի չորս ամսավճար՝ 60, ԿԼՈՐԻԿԻ ջոջերից՝ Կիւրակէ 10, „Շառաւիղ“ խմբէն՝ 10։ — ՍՆԻ ՀՈՂԵՐԻՑ՝ Ց. Վ., Մ. Զ., Ի. Զ., Ց. Բ., Հ. Պ., Գ. Ս., Զ. Զ., Ս. Ց., Մ. Օ., Թ. Կ., Ց. Ս., Ա. Թ., Ց. Թ., Վռամշապուհ, Պ. Թ., Ց. Տ. 10-ական ռուբլի, Մ. Զ. 6 ռ., Զ. Ե., Ս. Զ., Պ. Ս., Ց. Գ., Մ. Զ., Գ. Տ., Ա. Ց., Մ. Կ., Ա. Օ., Ս. Ց., Ց., Ց. Ց., Ս. Պ., Ց. Ռ., Լոյս, Ց. Ց., Գ. Փ., Ց. Ս., Ա. Ս. 5-ական, Մ. Օ., Գ. Կ., Ա. Օ., Ց. Ք., Ց. Զ., Ն. Ց., Ա. Գ., Օ. Ռ., Վ. Փ., Փ. Ց. 3-ական, Դ. Ց., Ց. Զ., Կ. Տ., Վ. Կ., Ն. Տ., Ի. Օ., Վ. Զ., Ի. Զ., Մ. Գ., Պ. Պ. 2-ական, Ս. Գ. 1. 60 կոպ., Մ. Գ. 1. 50 կոպ., Մ. Վ., Ց. Կ., Ա. Գ. մէկմէկ ռուբլի։ — ԱՊԱՍՏԱՆԻ ՇԱՀԱՐՇԱՆ գիւղից՝ Ի. Մ. 12 ռուբլի, Ս. Ե., Ի. Զ., 6-ական, Գ. Ե. 4, Դ. Ի. 2, Կ. Ք., Աննա Ա., Աննա Ս., Մարիամ մէկ-մէկ ռուբլի։ — ԱԿՈՌԻ գիւղից՝ Ա. Ա. 6, ռ., Ս. Ք. 5, Ն. Ա. 4, Վ. Ա. 3, Գ. Ա. 2, Ա. Ա. 1 ռ.։ — ԱՊԱՌԱԺ գիւղից՝ Նահատակ 10 ռ., Ն. Ս. 5, Դ. Ե. 2 ռ.։ — ԱՒԱՐԱՑՐ-ից՝ Նորայր, Երուանդ, Վարդիկ 10-ական ռ., Հայքաջ, Հրաչեայ, Լեւոն, Քաջիկ, Մինրան, Տրդատ 5-ական, Վարդան 4, Տիգրան, Օհան 3-ական ռուբլի։ — ՆԱԼՊԱՆՏ քաղաքից Մ. Ս.-ից 23 ռուբլի։ — Նաւահանգստի „Նորաբոյս“ ընկերութեան այրի անդամուհուց 17 ռուբլի։

ՆԵՂՈՒՑ-ից՝ Փոքր-Ծումակ, Ծաղիկ 20-ական ռուբլի, Աբէթ 11, Երջանիկ-Կարապետ, Արեւ, Սիրտ, Արամ, 10-ական, Փոքր-Վարդան, Լուսին, Առիւծ 5-ական, Աբգար 3 ռուբլի։ — ՆՈՐԲԵՐԴԻ „Ծիածան“ խմբից՝ Հայրապետ (98-ի մնացորդով 29 ռ.) 50 ռուբլի, Մարգար, Փարսատ 30-ական, Ս. Ս. 15, Զալլաղ 11, Ադամ, Տրդատ, Ն. Մ. Ծեր-Համակրող 10-ական, Ը. Ս., Ս. Վ., Ս. Ս. Վ., Տ. Օ., Տ. Թ. Անթոբ, Մուրատ, Պապիկ իշխան, Արարատ, Բ. Մ. Համակրողուհի 5-ական, Տ. Ի., Թ. Գ. 4-ական, Տիկին Ամնիկ, Տ. Ծ., Մանուշ, Կուռող, Լուսիկ, Վահագն 2-ական, Լուսաւորիչ, Օր. Զարուհի, Յովսէփ Դեղեցիկ, Գ. Ք., Տ. Վ., Հայկ-Դիւցազն, Տ. Ց., Տ. Ս., Փ. Ց., Բ. Ց. մէկ-մէկ ռ., Օր. Մարիամ, Քաջ Սեդրակ 50-ական կոպէկ։ Փարսատի շնորհիւ Միհրդատաշէնից՝ եղբարք՝ Հրացան, Վառող եւ Գնդակ, Առաջնորդ 10-ական ռ., Նոր-Մկրտուած 2 ռուբլի։ Գումար 1001 ռ. 10 կոպէկ։

ՈՍԿԵՀԱՆՔԻ ԿՈՄԻՏԷՆ՝

1900 թ. յունուար 1-էն սկսեալ՝ Անանուն Ոմն 95 դահ. ողջ, „Որոտում“ խումբ, Վեց-տարուածեան 40-ական, „Շանթ“ խմբէն՝ Գ. Պ. 5, Կ. Մ. 10. 50, Աղքատասէր Անուշեան 20, „Արշաւիրեան“ խմբէն՝ Պարոյր, Ոսկի, Ծաղիկ, Երկաթ 6. 25-ական, Ծառայ 5, Առիւծ 4, „Որոտում“ խմբի վիճակահանութենէն 80, „Արիւն“ խմբէն 20, Անանուն Ոմն 40, Հուր 3, Սուր 5. 25, Աղեղ 5, Սուրէն 6. 25, եւս 6. 25, ԲԼՈՒՐ քաղաքէն 225, „Արշաւիրեան“ խմբէն՝ (դեկտ.) Ոսկի, Պարոյր 6. 25-ական, Առիւծ 4, „Շանթ“ խումբ 10, „Որոտում“ խ. 20, Սուր 6. 25, Արեւ 5. 25, „Արսլանեան“ խ. 20, „Արաքս“ խ. 40, Ա. քաղաքի „Արամայիս“ եւ „Մակեդոնեան“ խմբերէն 10-ական։ — ԱՐՇԱԿՍԻԱՆԷՆ՝ սեպտ. հոկտ. դեկտ. ամսավճարներ՝ „Անձնազոհ“ խ. 60, „Երկիւղած“ խ. 24, „Ազգասէր“ խ. 30, Փիլիպոս 20 դահեկան։ Գումար 929. 25 դահեկան ողջ։

ՀՈՒՐ-ԵՐԿԱԹԻ Բաքելոն կոմիտէի 1899 թ. հոկ. 15-էն մինչեւ 1900 թ. յունվ. 15-ի ժուտքը՝ Մալաթրայ, Հայրենասէր թիւ 1, 2-ական օսմ. ոսկի, Հայ Ոմն, Ցուրտ մէկ-մէկ օսմ. ոսկի, Ազնիւ 5, Պ. 3 օսմ. ոսկի, Մասիս, Անանուն Ոմն կէս-կէս օսմ. ոսկի, Սուրճ, Արարատ 4-ական գաղղիական ոսկի, Մկրատ 1 գաղղիական ոսկի, Անուն Զուզող 105 դահ. փուտ, „Շարժում“ կարդացող 70, Լուսին 52. 50, Տիրոյեան 21, Սպասնալիք 132, Ժիրայր 35, Սուր 49. 50։ — ՊՂՆՁԱՔԱՂԱՔԻՆ՝ Երկաթուղի 121. 50 դահեկան, Անկեղծ 26. 25, Նրքամիտ 21, Ողորմած, Գեղամ, Ճարտարապետ, Ջիթենի 17. 50-ական, Մանուփաթուրայ 16. 50, Հսկայ 14, Ցորեն 10. 50, Առիւծ 10. 50, Սուր, Հրացան, Արոս 8. 75-ական, Արդար 4. 25 դահեկան։ Գումար 5147. 75 դահեկան փուտ։

Խմբագրութեան դիմել հետևեալ հասցէով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

10 մարտ 1900

Խորին ցաւով կը գիտենք որ, վերջի տարիներս մասնաւորապէս, հայ ազգին հանրային կեանքի շրջանակին մէջ, շատեր իրենց սովորութիւն ըրած են անուանարկել, վատահամբաւել, զրպարտել այս ու այն ազգայինը, առանց անհերքելի ճշմարիտ ապացոյց ունենալու անոր մեղապարտութեան մասին, և, առանց քննութեան, դիւրութեամբ հաւատք ընծայել անուանարկիչ լուրերու որոնք կրնան չարութեամբ կամ թեթևութեամբ հրապարակ նետուած ըլլալ:

Այս բաները, որոնք ուղեղի տկարութեան և սրտի անգթութեան նշաններն են, չէին կրնար չծնիլ մեր ժողովրդին մէջ մեծամեծ ադէտներ: Այդ բաներուն շնորհիւ է որ շատերու վրայ կը տեսնուի ուրիշներու մասին ակնածանքի, վստահութեան, սիրոյ զգացումներուն տկարացումը և երբեմն իսկ չքացումը և սակայն այդ զգացումներով ազգին ճշմարիտ մեծ ոյժը պէտք է որ կազմուէր:

Մեր վերականգման գործին համար, դրական և կամ ուրիշ կարգի նիւթական մեծ զօրութիւններ չունինք որ կարենանք համարձակիլ փոքր չարիք համարել ազգին մէջ փոխադարձ սիրոյ, եղբայրութեան ոգւոյն, բարոյական ոյժին այս ակներև տկարացումը: Ատոնք են այն սրբազան հուրն զոր խնամոտ ձեռքով տներնուս մէջ միշտ վառ պահելու ենք: Հետևաբար կը կարծենք թէ ոճիր մըն է որ ամբողջ ազգին դէմ կը գործուի, երբոր որ և է ազգային մը դրութիւն կ'ընէ սևցնել, աղարտել, զրպարտել ուրիշ ազգային մը, առանց նախապէս քննութիւն կատարելու անոր վերագրուած եպերելի հռչակուած արարքներուն վրայ: Նոյնպէս ոճիր մը կը համարենք, երբոր մէկը՝ լոկ կուսակցական հաշիւներով, կը կործանէ վարկ մը, անուն մը, համբաւ մը, հեղինակութիւն մը այն միակ պատրուակով որ ատոնք հակառակորդներ են եղած և կամ կրնան ըլլալ: Ո՞վ չգիտեր որ հեղինակաւոր անունները ուժ մը կը կազմեն, որոնք յարգուելու են որպէսզի կարող ըլլան իրենց դերը կատարել, իրենց բարիքը, իրենց օգուտը արտադրել յարմար ժամուն:

Եթէ էյուսահատելու համար, կրնանք ըսել որ հայերը, իբր ժողովուրդ, չէին և չեն կրնար բացառութիւն կազմելով, զերծ ու անաղարտ մնալ այդ բարոյական ախտէն որ առաւել կամ նուազ կը տիրէ ամէն երկիր, սակայն պէտք է իսկոյն ընդունինք որ միւս ազգերուն մեր վրայ ունեցած առաւելութիւնը այն է որ անոնք այդ վատահամբաւութեան դրութեան վնասները դարմանելու, ջնջելու ուժեր և հաստատութիւններ ունին, որոնցմէ մենք բոլորովին զուրկ ենք: Անոնք ունին ախտը և անոր դարմանը, մինչդեռ մենք ախտը միայն: Այսպէս Եւրոպայի է'ն չարախօս ազգին պատկանող մը կրնայ դիմել պետական դատարանի մը որ, գործին միջամտելով, կը զանազանէ մեղաւորը անմեղէն և իր վճիռներով ախտին տարածումը կարգիլէ: Մենք, հայերս, չունենալով այդ առաւելութիւնը, գէթ բաղձալու ենք պատուոյ Ատեաններու սովորութիւնը մեր մէջ ընդհանրացնել, որպէսզի դատարանի համապատասխանող մարմին մը կատարէ մեր ազգային գործերու և վէճերու նկատմամբ իր բարոյականացուցիչ դերը, անկողմնակալ արդարութեան մը գաղափարը մեր գլուխներուն վերևը սաւառնած պահելով:

Պատուոյ Ատեանի մը անհրաժեշտ հարկը զգացնել տուող բազմաթիւ խնդիրներ կան դժբախտաբար: Ասոնց կարգէն է նաև պ. Արփիար Արփիարեանի մասին տիրած այն վէճը որ այս օրերս նոր հրատարակութեամբ մը վերսկսած ըլլալով, կը սպառնայ շարունակուիլ ուրիշ նոր հրատարակութիւններով, վէճ մը որուն պատճառաւ երկու կուսակցութիւններ իրարու դէմ կը կուին, առանց տեսնելու որ անկից ծագած չարիքը կը հասնի նոյնիսկ կուսակցութեանց շրջանակէն դուրս ապրող հայերուն ալ, ըստ որում զուտ ցեղակցական կապը որով միացած ենք օտար հողին վրայ և որ կազմուած է լոկ բարոյականի և պատուոյ զգացումներէն, այս ամբաստանութիւններու ազդեցութենէն չի կրնար հետզհետէ չտկարանալ և չանհետանալ:

Որովհետև յոյս չունինք թէ այս վէճը որ հինգ տարի սկսած ըլլալով, ամէն տարի աւելի զայրագին աստիճանի կը հասնի, պիտի կրնայ ինքնիրեն վերջ մը ստանալ, որովհետև ակներև ալ կը տեսնուի թէ այս վէճով զբաղողներէն և ոչ մին պիտի ուզէ լռել և փակել այս գայթակղութեանց շրջանը, մենք համայն ազգին օգտակար գործ մը ընելու համոզումով յորդոր կը կարդանք ամենուն որ սովորութիւն ընեն այս տեսակ պարագաներու մէջ պատուոյ Ատեան կազմել և անոր թողուլ ճշդել ճշմարտութիւնը և հռչակել անմեղն ու մեղաւորը: Այս գաղափարին իբր հետևանք և իբր առաջին գործադրութիւն կ'առաջարկենք վերոյիշեալ երկու կուսակցութեանց որ համաձայնին ընտրել պատուոյ ատեան մը, որուն պաշտօնը ըլլայ լսել պ. Արփիարեանը և անոր վերագրուած ամբաստանութիւնները, և ըստ այնմ վճիռ մը տալ որ վերջնական և պարտաւորիչ ըլլայ երկու կուսակցութեանց համար:

Մենք ասիկա ո՛չ միայն կ'առաջարկենք այլ և կը պահանջենք, որովհետև գործին մէջ կայ ոչ թէ այս կամ այն կուսակցութեան շահը, այլ կուսակցականէն վեր՝ ընդհանուր ազգային շահ մը: Մենք ապահով ենք որ մեզի ձայնակից են բոլոր այն բարեմիտ, առանց կրքի և ազնիւ ազգայինները, որոնք առանց այս կամ այն կուսակցութեան պատկանելու, առանց խիստ յեղափոխական կամ յեղափոխասէր ըլլալու, կը հաւատան որ ժողովուրդ մը չի կրնար ապրիլ եթէ անոր մէջ բարձր չտիրէ պատիւը և պատուոյ նախանձախնդրութիւնը: Ունենանք այս նախանձախնդրութիւնը իր օրինաւոր միակ ձևին մէջ, որ է դատաստանը:

Կը խնդրենք „Դրօշակ"-ի պատուարժան խմբագրութենէն որ հաճի մեր այս անկողմնակալ կոչումը հրատարակել իր առաջիկայ թիւին մէջ և ընդունել մեր յարգանաց հաւաստիքը:

Յ. ԻՍԿԷՆՏԷՐ — Պարիզ

ԿԱՐԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆ — Լօնդօն

Յ. Գ. Սոյն նամակը երկու օրինակ գրուած է, մին ղրկուած է Դրօշակի եւ միւսը՝ Մարտի պատուարժան խմբագրութեանց ի հրատարակութիւն:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թողնելով „Դաշնակցութեան" կամքը արտայայտող պատասխանատու մարմիններին պպ. Յակոբեանի և Իսկէնտէրի առաջարկութեան վերաբերեալ օրինական որոշումը, մենք հարկաւոր ենք համարում այդ նամակի առթիւ, որ տպում ենք առանց ոևէ փոփոխութեան, հետևեալ կարճ նկատողութիւնները անել:

Ա) Երբ մարդիկ՝ հաշտարար դիտաւորութիւններից

դրուած՝ հրապարակ են գալիս ոևէ „անկողմնակալ կոչումով“, կարելի է պահանջել նրանցից ամենաբարձր „անկողմնակալութեան“ համապատասխանող ոճ և տօն իրենց „կոչումի“ մէջ։ Մի հատիկ անտեղի հնչիւն, մի աննշան ակնարկ դէպի այս կամ այն կողմը՝ կարող է փչացնել ինքնըստինքեան համակրելի մի քայլի տպաւորութիւնը և վնասել այն անհրաժեշտ վստահութեան, որ միջնորդները անպայման պէտք է ներշնչեն դէպի իրենց դիտումները։ Այդպիսի պակասութիւններից դժբախտաբար ազատ չէ յարգոյ պպ. Յակոբեանի և Իսկէնտէրի Նամակը, որի ձևը նոյնքան անհաճոյ կարող է լինել մեր ընթերցողներից շատերին, որքան երևի հաճոյ՝ մեր հակառակորդների մեծամասնութեանը։

Բ) Այն երևոյթը հայ յեղափոխական կեանքում, որը տեղիք է տուել պպ. Յակոբեանի և Իսկէնտէրի նամակին, միանգամայն համաձայն ենք, որ և՛ վնասակար է և՛ ամօթալի։ Բայց թող պպ. նամակագիրներն էլ համաձայնուեն մեզ հետ, որ այդ միտքը մեզ համար նորութիւն չէ։

Ահա ինչ էինք գրում մենք դեռ սրանից մօտ 10 տարի առաջ, „Դաշնակցութեան“ սկզբնաւորութեան միջոցներին, այն է 1891 թուին, „Դրօշակ“-ի 1 համարում.

„Սակայն որչափ եւ զանազանուենք ուղղութեամբ նրանցից (միւս յեղափոխական կուսակցութիւններից), այնուամենայնիւ մենք ուզում ենք նրանց հետ ընկերական յարաբերութեան մէջ լինել, որովհետեւ բոլորս էլ կռուում ենք մի ընդհանուր թշնամու դէմ“։

Մենք մեր տեսակէտին հաւատարիմ մնացինք, և ահա ինչ բառերով ենք շեշտել այդ՝ 98 թուին („Դրօշակ“ № 1).

„Թերթելով յեղափոխական կոչուած արտասահմանեան բազմաթիւ հրատարակութիւնները, յիշելով տարուայ ընթացքում տեղի ունեցած երկպառակտումները, ընթերթերցողի կուրծքը սեղմուում է այն անմխիթար, ճնշող եւ յաճախ զզուելի պատկերից, որ ներկայացնում են դրանցից շատերը։ Հոգու որպիսի՜ փոքրութիւն, որքա՜ն ստոր կրքեր, ցեխ, ապականութիւն... Եթէ ճիշդ են հրապարակ հանուած բոլոր ամբաստանութիւնները, — դառն է, ողբալի։ Իսկ եթէ դրանց մեծ մասը հնարուած է, չարախօսութիւն, զրպարտութիւն, ստախօսութիւն է,— աւելի դառն, աւելի ողբալի դրութիւն... Ինչու այդ ցեխերը հիմա են գոյանում, կամ այս ի՞նչ տարօրինակ զւարճութիւն է՝ զրպարտել, չարախօսել, ցեխ փնտռել անպատճառ եւ գտնել մինչեւ իսկ այնտեղ, որտեղ չկայ։ Այս ի՞նչ հասարակական հիւանդութիւն է, որով վարակուած է մթնոլորտը“։

Վերջապէս նոյն այն մեր Յաւելուածում, որը առիթ է տուել յարգոյ պարոնների Նամակին, մենք երկարօրէն կանգ ենք առել նոյն երևոյթի վրայ, կրկնելով՝

„... թէ որքան վնասակար ենք համարում յեղափոխական տարրերի ու հասարակութեան մի մասի անվերջ ամբաստանութիւնները, մերկացումները, յարձակումները եւայլն, իրոլոր սրտէ ցանկանալով ամբողջ հայութիւնը ազատ տեսնել այդ ներքայրասպան ընթացքից“։

Այս բոլորից յետոյ՝ ի՞նչ է նշանակում պպ. նամակագիրների կողմից խօսել մի ինչոր վէճի մասին, որ „հինգ տարի սկսած ըլլալով, ամէն տարի աւելի զայրագին աստիճանի հասնի“, կամ պնդել՝ թէ „երկու կուսակցութիւններ կը կուին առանց տեսնելու, որ անկից ծագած չարիքը“ ևն։ Մենք է՞լ չենք „տեսել“ չարիքը... Եւ յետոյ „Դրօշակ“-ի յիշեալ „հինգ տարուայ“ համարներից և ոչ մէկում չէ կարելի գտնել ոչ միայն „զայրագին աստիճանի“ ոևէ վէճի հետք, այլև նոյնիսկ ոևէ անուն, որ կուսակցական տեսակէտից վատաբանուած, ամբաստանուած լինի։ Եւ ընդհակառակը՝ մենք կարող ենք ցոյց տալ հարիւրաւոր օրինակներ մեր հակառակորդների պաշտօնական օրգաններում, ուր դրանք, օգտուելով մեր լռութիւնից և տածած յոյսերից՝ թէ „բոլոր բարեմիտ, առանց կրքի և ազնիւ ազգայինները“ պէտք է հասկանան մեր ընթացքը, — իրենց գրականական շահատակութիւններում սահման չեն թողել, որ անցած չլինեն։

Գ) Մենք տարաբախտաբար չենք հաւատում, որ առաջարկուող ատեանը արմատական միջոց կարող է լինել նկատուած ախտի դէմ. շատ բնական է, օրինակ, որ մարդիկ, որոնք սովոր են, յանուն անձնական կամ կուսակցական շահերի, անհիմն և անբարեխիղճ կերպով ամբաստանել ուրիշներին, կարող են հեշտութեամբ նոյնը անել և պատուոյ ատեանի ու նրանց անդամների վերաբերմամբ, եթէ նոյնիսկ ենթադրենք, որ վերջիններս կանգնած կը լինեն միշտ իրենց բարձրութեան վրայ և չեն ծառայի իսկապէս այս կամ այն անձնաւորութեան կամ կուսակցութեան շահերին։ Ենթադրենք սակայն, որ եթէ պպ. նամակագիրների առաջարկած ատեանը չէ կարող արմատախիլ անել չարիքը, գոնէ մասամբ կը զսպի, կը թուլացնի նրան։ Կարող է պատահել։ Բայց ինչո՞ւ այդ դէպքում նրանք հարկաւոր են համարում իսկոյն դիմել մի մասնաւոր խնդրի և ինչո՞ւ բաւականանում են միմիայն այդ խնդրով։ Չէ՞ որ նրանք ևս գիտեն, որ „պատուոյ ատեանի մը անհրաժեշտ հարկը զգացնել տուող բազմաթիւ խնդիրներ կան դժբախտաբար“։ Ինչո՞ւ այդ խնդիրներն էլ չեն յիշատակում։ Եթէ մեզ ասում են, որ մեր Յաւելուածն է առիթ տուել Արփիարեանի խնդիրը դնել, մենք կը պատասխանենք. նախ՝ մեր Յաւելուածը գրուած է միութեան խնդրի առթիւ և ոչ թէ ոևէ անհատի. և երկրորդ՝ դիցուք այդ Յաւելուածը նկատուած ամբաստանութիւնների մի նոր օրինակ է, բայց չէ՞ որ պպ. նամակագիրներին վրդովում է ոչ թէ մի կամ երկու դէպք, այլ „խորին ցաւով, վերջին տարիներս մասնաւորապէս, հայ ազգին հանրային կեանքի շրջանակի մէջ դիտուած“ մի վատ սովորութիւն և „ազգին մէջ փոխադարձ սիրոյ, եղբայրութեան ոգւոյն, բարոյական ոյժին ակներև տկարացումը“, — մի խօսքով՝ այն „մեծամեծ աղէտները“, որ ծնուում են „ուղեղի տկարութիւն և սրտի անազնուութիւն“ արտայայտող „բարքերից“։ Մեր կարծիքով, այդպիսի մի մեծ և ընդհանուր բնաւորութիւն ունեցող չարիքի դէմ առաջարկուող միջոցներն էլ պէտք է ընդհանուր լինեն, և այդ տեսակէտից՝ մեզ համար անհասկանալի է մնում թէ ինչու պպ. Յակոբեան և Իսկէնտէր միաժամանակ չեն դիմում նաև միւս յեղափոխական կոչուող կամ յեղափոխութեան համակրող բոլոր ըմբագրերին, որոնցից իւրաքանչիւրի ընթացքը նոյնպէս նշանակութիւն ունի նկատուած ախտը վերացնելու գործում. ինչո՞ւ նրանք՝ նախ քան ատեանի ծրագիրը ընդհանուր կերպով բոլորին առաջարկելը, բաւականանում են հրապարակ նետելով մի մասնաւոր խնդիր, մի դէպք միայն։

Մեզ համար հաճելի է կարծել, որ պպ. Յակոբեան և Իսկէնտէր ներշնչուած են ամենալաւ դիտումներով, բայց երբ մենք ուզում ենք նրանց նամակից բխողայս հարցերն ու կասկածները իրար հետ կապել և հաշտեցնել, մենք չենք կարողանում համոզուել, ոչ պարոնների ներկայ քայլը աւելի „ընդհանուր ազգային շահերի“ կը ծառայի քան թէ կուսակցական...

Ինչ վերաբերում է պպ. Յակոբեանի և Իսկէնտէրի ընդհանուր գաղափարին, մենք կը ցանկանայինք, իհարկէ, որ դա որքան կարելի է աւելի մեծ հող գտնէր մեր հասարակութեան մէջ։